

741

201
7-49

1913'

b 2001

0010

201
Դ-49

ԿՐՈՆԱ-ԳԵՍՄԱԿԵ-ՓԻԼԻՈՒԹԵՎԵԿԵ ԳՐԵԳՈՐԵ

Դրեթի գլուխի 1500-ամեակի և տպադրութեան 400-ամեակի
առթիւ.

Փոխադրեց Գալուս

330

№ 4

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔ

ԴՐ. Ի. ՊԵՏԵՐՍՈՆԻ

280
09-076

ԹՐԻՖԼԻԳ
Տպարան ՀՀԱԿԵՐԵՄՈՆ
1913

ԿՐՈՆԱ-ՊԵՏՄԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրեթե գիւտի 1500-ամեակի և տապագրութեան 400-ամեակի
առթիւ.

201
11-49 ✓

Փոխադրեց Գալուս

Nº 4

980

102-976

Ллд. 440. 2. ф-2-22
Фондърънъ членъ външнъ - външнъ - външнъ
члв. Единъ пътъ външнъ - външнъ
пътъ, пътъ външнъ

ԴԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՒԱԿԱՅ թիվ 37 1913

ԱՇԽԱՐՀԱՅԵԱՂՔ

1005
90560

ԴՐ. Ի. ՊԵՏԵՐՍՈՆԻ



Տպաքանչ գիրք

1913

11629

ՕՐ
ՃՐ-ԶՈՒ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ, ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՅՔԻ

ԴՐ. Ի. ՊԵՏԵՐՍԵՆ

(ԳԵՐՄ. ՓՈԽԱԴՐ. ԳԱԼՈՒՍ)

Յառաջաբան

Ամեն մարդ, ով իր համար կրօնական պարզ աշխարհայեցք կազմել է ուղում, ստիպուած, է այսոր անպայման բնական գիտութիւնների սկզբունքների հետ հաշիւ տեսնել:

Հստ երկոյթին կրօնն ու բնական գիտութիւնը—հաւատալն ու փորձով իմանալը—հակառակ բեկաներ են, որոնք մի լարուած հակասութեամբ իրար դէմ են կանգնել: Հաւատալը—մենք վերցնում ենք այս խօսքը կրօնից անկախ, տրամաբանական իմաստով—ներքին անպայման անկախութիւն ունենալ է նշանակում, որը թէկ առանց փաստի է լինում, բայց խորը համոզմունքով. իսկ բնական երկոյթները կախուած են բնական փաստական անհրաժեշտութիւնից ու անպայմանութիւնից: Կրօնը պահանջում է բարոյական մի գործունէութիւն, որը ներքինը ազատ ինքնապատասխանաւութիւնից բղխի, բնական գիտութիւնները մեզ սովորեցնում են, որ մեզ չըջապատող ամբողջ իրականու-

թիւնն անպայմանօրէն պատճառի և հետևանքի յա-
ղորդականութեան օրէնքից է բղխում:

Կրօնի և բարոյականութեան հիմնաքարն է կամքի
աղատութիւնը. այն ինչ բնութեան մէջ իշխող կարգը՝
օրէնքը միայն բռնի հրամայականութիւն և անհրա-
ժեշտութիւն է ճանաչում:

Կան շատ կրօնական զգացմունք (—այս էլ հո-
գեկան մի տրամադրութիւն, ընդունակութիւն է, ճիշտ
այնպէս, ինչպէս բանաստեղծական, նկարչական, ե-
րաժշտական և այլ ընդունակութիւնները) ունեցող
մարդիկ, որոնք բնախուզութեան արած այն յառաջդի-
մութիւնը մեծ անհանգստութեամբ են դիտում, որով
գիտնականները ճգնում են բնութեան երեսյթների
բացատրութեան մէջ աւելի ու աւելի խորը թափան-
ցել. նրանք վախով սպասում են, թէ արդեօք այդ գիտ-
նականները տիեզերական ոգու համար մի տեղ կյատ-
կացնեն թէ ոչ: Այն բնապէտը, որը սովորութիւն չի
դարձրել բոլոր այս խորհրդածութիւններն առանց այլ
եալութեան ժխտել, խորհրդածութիւններ՝ որոնք մեր
մտքով ըմբռնելու կարողութիւնից այն կողմը, մաթե-
մատիկական օրէնքների ապացոյցներից վեր են, նա
կզգայ անշուշտ իր հետախուզութեան մեթոդների և
նրանց տուած արդիւնքի անբաւարար լինելը: Այս եր-
կու տեսակի մարդիկն էլ տանջուում են:

Ուզենք չուզենք, մտածող անհատի էութեան մէջ
կայ մի ձգտում դէպի մի ընդհանուր, միապաղա-
նասկացողութիւն. և այս ձգտումը, եթէ չի ուզում, որ
մի անբաւարարութիւն պատճառող յոռետեսութեամբ
վերջանայ, անպատճառ մի հաշուեհարթարութիւն,
խնդրի որոշ ու պարզ լուծում պիտի գտնի:

Հայեացքների այս տարբերութիւնից մի հսկայա-
կան գրականութիւն է ստեղծուել: Գրուածքներ կան,
ուր փաստով իմանալն (Wissen) և հաւատալն իրար
հետ միացնելլ անկարելի է համարւում: Մէնք գտնում
ենք նաև մի ուղղութիւն (պահպանողական բրիտո-
նեաներ), որը մերժում է պատճառի և հետևանքի ան-
հրաժեշտ կապակցութիւնը. չի ընդունում, թէ ժամա-
նակից և տարածութիւնից անկախ և ընդհանուր հրա-
մայականութիւն ներկայացնող բնական մի օրէնք կայ,
ու եթէ այդպէս լինի էլ, այնուամենայնիւ այդ ան-
պայման օրէնքը ենթարկուում է Աստուծու կամքին:
Կան և ուրիշ գիտնականներ, որոնց համար այս հա-
մաշխարհը իրեւ մի մեքենայ է ներկայանում, որի մէջ
որևէ աստուած տեղ ունենալ չի կարող: Սովորաբար
այսպէս է տիրող կարծիքը – կամ անպատճառ միայն
կրօնն է, որ իրաւունք ունի այս վիճելի խնդրում, և
կամ միայն գիտութիւնը:

Սակայն ջանքեր էլ չեն պակասում այս երկուաը
իսկապէս հաշտեցնելու, թէև այստեղ էլ հայեացքներն
իրենց ժամբամանութիւնների մէջ շատ են տարբեր-
ում: Մեծ թւով զրուածքներ են երևացել նորերս,
որոնք այս խնդրով են զրադշում, այնպէս որ եթէ
ցանկանք էլ այս մեր զբաղեցնող խնդիրը պարզաբա-
նող կարևոր կարծիքներն ու հայեացքները բոլորը հա-
մառօտակի յիշել, դժուար թէ մեր այս զրբոյկի ծա-
ւալը բաւական լինի: Վստահ կարելի է ասեւ, որ փի-
լիստիկայութեան ամրողջ պատմութեան առանցքը բնու-
թեան օրէնքի և Աստուծու անպայմանութեան և ան-
կախութեան մէջ եղած յարաբերութեան շուրջն է գառ-
նում:

Այս պատճառով էլ այս հակադրութեան գլխաւոր կէտերի կարծ նկարագրութիւնն ենք անում այստեղ, և միաժամանակ փորձում ենք այն ճանապարհը գտնել որի վրայ միայն կրօնի երնագիտութեան համաձայնութիւնը հնարաւոր է երկում:

Եւ պէտք է որ այս հնարաւոր լինի: Մի կողմից մեզ դրզում է այն փաստը, թէ բնութեան մէջ առաջ եկած երեսյթները մի խիստ օրէնքով են առաջնորդում, մի անդիմադրելի հաստատականութեամբ ու վստահութեամբ. միւս կողմից մեր մէջ, կամ աւելի ճիշտն ասած, մեզանից շատերի ներքին աշխարհում ապրում է մեզ գաֆան օրէնքի հրամայական կապանքներից վեր բարձրացնող մի պահանջ. մեր մէջ ապրում է մի զգացում, որը մեզ բնութեան բունութիւնից անկախ դարձնել է ձգտում:—Ուստի, պէտք է այս անտառնելի դրութիւնից մի ելք որոնել, եթէ մենք ինքներս մեզնից ձեռք վերցնել չենք ուզում:

ԽՆԴՐԻ ՊԱՐՁԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Կրօնի և բնական գիտութիւնների մէջ եղած յարաբերութեան արդարացի և անաչառ քննութիւնը կամ այդ մասին եղած բանակոիւը չպէտք է այնպէս տանել, որ հէնց սկզբից նրանցից մէկն ու մէկի գոյութեան իրաւունքը ժիստուի:

Յաճախ որոշ մարդիկ ձգտում են բնագիտութիւնից մի քանի մասնաւոր հարցեր և ուսմունքներ իբր սխալ և թերի ցոյց առաջ, ու դրանով մեր ունեցած վստահութիւնը գէպի այն բոլորովին խախտել: Այս ձեր վարմունքը լրջօրէն որոնողի և աղնուաբար կոռուղի

համար ոչ մի ծառայութիւն չի անի. ինչ մի ծառայութիւն կարող է կատարել այս ձեր այն մարդուն, որը հետևողականութեան և բնախուզական մտածողութեան և նրա արդիւնքների արժէքն ըմբռնում է և միաժամանակ կրօնական զգացմունք ունին և հաւատ գէպի ամենակարող ողին: Զի կարելի Դարվինին կամ նման այլ մեծ բնագէտների, որոնք նեղ քրիստոնէական աշխարհայեցք չունեն, սխալների մէջ ըսնել աշխատելով՝ կամ թէ նրանց փոքրիկ աշակերտների նման դասարանից դուրս անելով՝ հակակրօնական աշխարհայեցքը ոչնչացնել. ոչ էլ նրանով է մի մեծ բան կատարում, երբ մատնանիշ է արւում, թէ կան բազմաթիւ հոչակաւոր բնագէտներ, որոնք կրօնական ջերմեւանդ հաւատը ունեն:

Անալօգիական-նմանաբանական փաստը, որը միունք բան ապացուցանելու ամենաթոյլ ձեն է, այստեղ էլ շատ քիչ բան է կատարում. այն, մինչև անգամ կարելի է ասել,—եթէ բնագիտութեան մէջ ներկայումս նշանակութիւն ունեցող բոլոր հայեացքներն իբրև անհիմն և պակասաւոր ապացուցուած էլ լինէին՝ դրանով էլ այս աշխարհայեցքների մէջ եղած մաքասման տեսակէտից ոչինչ շահած չէինք լինի: Շատ հաւանական է, որ գարվինական աստիճանական զարգացման վարդապետութիւնից գողացող «հաւատացողները» մի տեսակ թեթեւութիւն են զգում և միիթարւում, որ այս մի ժամանակ այնպէս հիացում պատճառող և իբրև հսկայ գործ փառաբանուող տեսութիւնն այժմեան գիտական տեսակէտով այնքան էլ հաստատուն չէ երեւում:

Մեզ զբաղեցնող հարցի կորիզը—արդեօք բնական

գիտութիւնների կողքին կրօնը տեղ ունենալ կարող է, թէ ոչ—գիտական հին տեսութիւնը ջրող մի նոր այլ տեսութեան երևան գալով չի փոխուի: Ներկայումս ոչ մի բնագիտական ուղղութիւն չի ոչնչանում, այլ մի ուրիշն է գալիս և նրա տեղը գրաւում:

Եթէ ցանկանում ենք հերեւլ նիւթապաշտական (Materialismus) վարդապետութիւնը կամ աւելի ճիշտն ասած մեքենական աշխարհայեացքը (mechanische Weltanschaung), որը այժմ ընդհանրապէս նորագոյն բնախուզութեան արդիւնքն է համարւում, և զբանով կրօնական աշխարհայեացքի ուղիղ լինելն ապացուցանել, այս ժամանակ չպէտք է այս հայեացքի մասնակի արտայայտութիւնների դէմ կռուենք, այլ նրա իսկութիւնն ու ճշտութիւնը իր արմատական կէտում քննենք: Մենք պարտական ենք ապացուցանել, թէ անկախ ու կատարելագործուած բնագիտական ուսմունքի կողքին կարող է և իրաւունք ունի մի ըարձր աստիճանի վրայ եղած կրօնն էլ տեղ ունենալ:

Այս նպատակին համուելու համար էլ պէտք է բնական գիտութիւնը, նրա միջոցներն ու նպատակները ուսումնասիրութեան նիւթ գարձնել:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԷՌԻԹԻՒՆԸ

1. Զննութիւն եւ մեկնութիւն

Բնախուզութիւնը հիմնում է գիտողութեան վրայ. ինչ որ զգայաբանքների միջոցով մեր գիտողութեանն է ենթարկում, ինչ որ գիտելուց յետոյ մաթեմատիկորէն ու տրամաբանօրէն ապացուցւում է, վերաբրում է բնագիտութեան սահմանին:

Աչքով գիտելիս (հարկաւար դէպքում մանրագիտակի և հեռագիտակի օգնութեամբ) և կամ միւս զգայարանքներով զննելիս՝ ուրիշ խօսքով զգայական անմիջական զննութեան և փորձի մէջ գանում ենք բնագիտական ուսումնասիրութեան հիմունքները—այսինքն այնտեղ՝ ուր մի որևէ երեսոյթի համար ուղած պայմանները կամայականօրէն առաջ ենք բերում: Մտաւոր չափն ու կշիռը կազմում են առհասարակ մի որևէ ուսումնասիրութեան էական միջոցները: Ինչքան որ մեր զգայաբանքները և մեր ձեռքի տակ եղած գործիքները մեզ հնարաւորութիւն են տալիս, նոյն չափով էլ մեր գիտողութիւնները վստահելի են լինում. չենք կարող ասել, թէ այդ գիտողութիւնները անպայման ճիշտ են: Որքան հնար է, երեսոյթները բոլորովին անկողմնակալ կերպով են ուսումնասիրում, նկարագրում, նրանց յաջորդականութիւնը ապացուցւում, մեկնաբանում: Մեկնաբանել նշանակում է մի խնդիր պարզ և հասկանալի գարձնել:

Երբ երևոյթների բնագիտական բացատրութիւնները լուրջ ուսումնասիրում ենք, գտնում ենք շատ անզամ, որ երբ մարզիկ մինչև այժմ անհասկանալի մի երեսոյթի են հանդիպում, աշխատում են այն մեզ սովորական և ընդունուած մի երեսոյթով կամ նրան նմանեցնելով բացատրել: Այս ձերի բացատրութեան իբրև մի օրինակ վերցնենք նկատնի երկնային մարմինների շարժման օրէնքը.—երկիրը պատուում է արևի շուրջը, լուսինն էլ երկրի չորս կողմը՝ մօտաւորապէս շրջանաձև մի ուղիով. երբ երկիրը արևի շուրջն է գառնում, լուսինն էլ, իբրև նրա հաւատարիմ արբանեակը, հետեօւմ է նրան. երկիրը նրան իր ձգողական

ոյժով ամուր իր մօտ է պահում։ Նետոնը ըմբռնեց այն ոյժը, որը քարին դէպի գետին է ձգում—այդ ծանրութեան ոյժն է, նոյն ոյժն է, որ երկիրն արևին ու լուսինը երկրին մօտ է պահում։ Նա կարողացաւ ապացուցանել, որ ծանրութեան, կամ որ նոյն է ձգողութեան օրէնքը իշխում է բոլոր երկրային և երկնային մարմինների—աստղերի, մոլորակների և նրանց արբանեակների յարաբերութիւնների վրայ։ Մի ուրիշ օրինակ էլ։ Մենք այսօր շատ ենք լսում զանազան տեսակի ճառագայթների մասին։ ճառագայթները որոշ շարժողական վիճակ են, որոնք ընդհանրապէս մի որևէ մարմնից ուղիղ գծով արտահոսում են և որոնք շատ պարզ վերլուծման են ենթարկւում։ Այս ճառագայթները զանազանակերպ են արտայայտում։ մի քանի սին զգում ենք մեր զգայարանքներով, ինչպէս լոյսի և տաքութեան ճառագայթները։ մի քանիսին գործիքների միջոցով, ինչպէս սէօնտկէննեան և ելեքտրական (ոչ լոյսի) ճառագայթները։ Այժմ գիտնականները մի շատ հետաքրքիր ու կարենոր երևոյթ են հետազոտել և ապացուցել, որ լոյսի և ելեքտրական ոյժի արձակած ճառագայթները շատ մօտ ազգակցութիւն ունին, իսկապէս նոյն բանն են, բայց արտայայտութեան տարբեր ձևի տակ։ Այս երկու տեսակի ճառագայթների մէջ կան տատանումներ, մի անծանօթ, հանելուկային մարմնի տարածումներ, որին դեռ ոչ մի մարդ չի տեսել, սակայն այդ մարմինը ճիշտ այնպէս հաստատ է, ինչպէս մի հաստատուն, շօշափելի իր այդ տատանումները այսպէս կոչուած «եթերի» տատանումներն են, այն է որ ամբողջ տիեզերքի «դատարկ» տարածութիւնները լցնում և բոլոր մարմինների մէջ թափանցում է։

Մենք գիտենք, որ լոյսի ճառագայթի մէջ էլ այս անծանօթ մարմնի մասնիկները տատանում են, ճիշտ այնպէս՝ ինչպէս ջրի մասնիկները ծփացող լճի մակերեսի վրայ, որոնք ալեճն տատանումներ են կատարում, ենում իջնում են և միաժամանակ առաջ շարժւում։ Լուսաւոր մարմնից եթերական ալիքներ են արտահոսում, ազգում են աչքի վրայ և առաջ են բերում այն, ինչին որ մենք լոյս անունն ենք տալիս. ելեքտրականացած մարմիններից էլ եթերական ալիքներ են արտահոսում, որոնք միայն գործիքների միջոցով ենք նշմարում, իսկ մեր զգայարանքներով։

Գիտնականները գտել են, որ այս լոյսի և ելեքտրականութեան ալիքները նրանով են իրար նման, որ երկուսն էլ հաւասար արագութեամբ են տարածում, թէկ նրանց ալիքների մեծութիւնը տարբեր է։ Ելեքտրականութեան ալիքները որոշ չափով նման են ովկիանոսի երկարատարան ալիքներին։ լոյսի ալիքները նման են ճակի փոքրիկ ալեակների արագ ճոճումներին, որոնք գոյանում են, երբ զեփիւոը նրա երեսը թեթև շոյում է։ Կարճ ասած, լոյսը և ելեքտրականութիւնը իրար նման են—ի հարկէ խօսը այստեղ ելեքտրական լոյսի մասին չէ, այլ ելեքտրական այն անտեսանելի ճառագայթների մասին, որոնցով օրինակ, անթել հեռագիրն է գործում։ Ելեքտրականութեան մասին եղած այս ճանաչողութիւնը գործնական մէծ նշանակութիւն է ստացել, օրինակ անթել հեռագիրը այս գիւտի մի հետեանքն է, թէ ելեքտրականութեան որոշ քանակի խտացումն ընդունակ է շատ հեռաւոր տարածութեան մէջ ելեքտրական ոյժ—ճառագայթներ արձակել։

2. Բնութեան ոյժերի մէջ եղած միութիւնը:

Բնութեան ոյժերը ճանաչելու կարեոր նշանակութիւնը, (թէ լոյսն ու ելեքտրականութիւն աղքակից ոյժեր են, թէ ընկնող քարը և լուսինը նոյն ոյժին են ենթարկում) նրանումն է, որ այդ ուղղութեամբ քայլեր են արւում, որպէսզի բնութեան ոյժերի միջի առաջուց ենթագրած միութիւնը ցոյց տան:

Ինչքան աւելի էտորն է թափանցում բնագէտը մեղ շրջապատող աշխարհի գաղտնիքների մէջ, այնքան աւելի են պարզում իրերի յարաբերութիւնները. այս գոյնզգոյն բազմազանութեան մէջ երևան է գալիս միօրինակութիւն և միութիւն: Ինչպէս որ լուսնին հրկրին մօտ պահող և ծառից ինձորը ցած ձգող ոյժերի նոյն լինելը ճանաչուած է, ինչպէս որ լոյսի և ելեքտրական ճառագայթների տատանումների նմանութիւնն ընդունուած է, այսպէս էլ հետզհետէ այն ակասութիւնն է իր համար ճանապարհ բաց անում, թէ բնութեան ոյժերի բոլոր արտայատութիւնները, որոնք այնպէս զանազանակերպ և փոփոխակի ձևով են ամեն տեղ երեան գալիս, իրենց էութեամբ մի, կամ գոնէ շատ քիչ ոյժերի հետևանք են: Կարելի է ասել, որ նորագոյն բնախուզութեան կարեոր հարցն է բնութեան մէջ գործող ոյժերի մի լինելը, մի միութիւն կազմելը ցոյց տալը:

3. Սուբստանցի (գոյացութեան) միութիւնը:

Բնագէտներին կենդանի հետաքրքրութիւն պատճառող մի ուրիշ հարց էլ գոյացութեան, էութիւնների միութիւնն է: Քիմիան իր լուսաբանութեան մէջ պէտք ունի հիւլէ (ատօմ) գաղափարին, մենք կարող ենք ամեն մի նիւթ, օրինակ մի կտոր ածուխ, անվերջ փոք-

րացնել-բաժանել, եթէ մինչև անգամ այս դէպքում պէտք եղած գործիքները չունենանք, որով ածուխը անվերջ մանր մասնիկների բաժանենք, կարող ենք այդ բաժանումը այնուամենայնիւ մտաւոր կերպով շարունակել. այն, մտաւոր կերպով անվերջ բաժանելու հնարաւորութիւնն անսահման է, մարդ չի էլ կարող երեւակայել, թէ մասերի բաժանելու հնարաւորութիւնն ի՞նչպէս կարող է անսահման չլինել: Բայց և այնպէս քիմիան, որոշ երկոյթների վրայ հիմնուած, որոնց մասին այստեղ երկար խօսել պէտք չէ, սովորեցնում է, թէ նիւթի գործիքների միջոցով մասերի բաժանելը մի սահմանի է համուռմ, որից այն կողմը նրա բաժանելի լինելը դադարում է: Այս փոքրիկ մասնիկներին որոնք այլ ևս գործիքի միջոցով չեն բաժաննուած, հատիկ (մօլէքիւլ) անունն են տալիս: Ինչ որ գործիքներով այլ ևս բաժանել չի կարելի, քիմիական միջոցներով դեռ հնարաւոր է. երբ հատիկը ելեքտրական հոսանքի կամ ջերմութեան կամ այլ նիւթերի ազդեցութեան ենք ենթարկում, բաժաննուած է մասերի—գոնէ ժամանակաւոր կերպով, ահա այդ բաժաննուած մասնիկները, որոնք այլ ևս մինչև անգամ քիմիական միջոցով էլ չեն բաժաննուած, կոչւում են հիւլէ (ատօմ):

Թիմիկոսը կարող է այս հիւլէի հետ զանազան գործողութիւններ կատարել, նա կարող է սրանց կշիռը որոշել, և օրինակի համար ասել, թէ թթուածնի հիւլէն 16 անգամ աւելի է կշռում քան ջրածնին, թէ ծծումբի մի ատօմը 56 անգամ աւելի է կշռում քան ջրածնին և այլն:

Կան մօտ 80 այսպէս կոչուած տարրեր. սուբստանցներ, որոնք պարզ են համարւում, որոնց ան-

հնար է բաժանել ուրիշ սուբստանցների վերածել: Այն անհամար զանազանակերպ նիւթերը, որոնցից այս համաշխարհն է կաղմուած, իսկապէս այս հաղիւ թէ ութուն տարրերից են բաղադրուած. օրինակ. փայտը բաղադրուած է ջրածնի, թթուածնի և ածխածնի ատօմներից. ժանգը՝ երկաթի և թթուածնի ատօմներից աղը քլօրի և նատրիոնի: Ատօմների շատ կամ քիչ իրար միացնելուց առաջ են գալիս բոլորովին տարրեր նիւթեր: Քիմիայի գլխաւոր գերերից մէկն է որևէ նիւթի մէջ ատօմների այս չափերն ու միացումները որոշել:

Այսպէս աեսնում ենք, որ հարիւր հազարաւոր տարրեր նիւթեր կաղմուած են միայն հագիւ ութուն հիմնական սուբստանցներից: Վերեսում ասացինք, որ հիմնական նիւթի ատօմները կարելի է կըռել, սակայն ոչ թէ հատ-հատ, այլ մի քանի երկվլին և եռելին միասին. այսպէս թէ այնպէս, գիտնականները կարող են մէծ ճշտութեամբ ատօմների ծանրութիւնը որոշել: Այս աշխատանքի ժամանակ այն շատ հետաքրքիր արդիւնքն է ստացուել, թէ կշիռի բոլոր հնարաւոր թուերը երեան չեն գալիս, այլ այդ թուերը դասաւորելիս մի որոշ պարբերականութիւն է ստացում, այնպէս որ թուերի շարքի մէջ որոշ տեղեր պարբերաբար քաց են մնում. սրանից ահա եղանակացուեց, որ գոյութիւն ունեն մեզ դեռ ևս անծանօթ տարրեր էլ, մինչեւ անգամ կարելի եղաւ այդ անծանօթ տարրերի յատկութիւնները որոշել: Քիմիայի ամենամեծ յաղթանակներից մէկն էր գալիոն կոչուած տարրի գիւտը: Նրա ատօմի կշիռը և յատկութիւնները շատ առաջուց յայտնի էին, երբ նրա գոյութիւնը բնութեան մէջ դեռ հաղուակուած էր:

Գալլիոնի գիւտը քիմիայի համար նոյն տեսական նշանակութիւնն ունեցաւ, ինչ որ նեպառւն մոլորակի գիւտը աստղաբաշխութեան համար, որի գոյութիւնը, ինչպէս յայտնի է, հաստատուած, նրա շրջանը գծուած, դիրքը աստղերի մէջ մաթեմատիկական հաշիւներով ձիշտ որոշուած էր արդէն. երբ նոր նրան տեսնել հնարաւոր եղաւ:

Ատօմների կշիռը ցոյց տուող թուերի պարբերականութիւնը պէտք է անշոշտ մի հիմք ունենայ, գիտնականները ենթագրում են, թէ ինչպէս գոյութիւնունեցող այն անհամար իրերը ութուուն տարրերի այս կամ այն չափով ու դասաւորութեամբ միահալուց են առաջ գալիս, այնպէս էլ շատ հաւանական է, որ այդ ութուուն տարրերն էլ մի կամ մի քանի հիմնական տարրերից են առաջ գալիս, ուրիշ խօսքով նըանք այդ մի քանի հիմնական սուբստանցների տարրեր ձեմ երևոյթներն են: Վերջին ժամանակներս այնպէս յաձախ յիշուած «ռազմում» տարրի գիւտը այս ենթագրութիւնն աւելի հաստատեց, գիտնականները գտան թէ այս արտաքուստ իր տարր թուացող ռադիումը, որը հիմնական տարր լինելու բոլոր նշանները ցոյց է տալիս, այնուամենայնիւ բաղադրուած է, և թէ այն՝ կիսով չափ մի ուրիշ տարրի՝ հելիումի է վերածւում:

Նրանով մենք այս ապացոյցն ունենք ձեռներիս թէ միս, ըստ երևոյթին պարզ, անբաժանելի թուացող տարրերից էլ ուրիշ տարրեր անջատել կարող է հնարաւոր լինել և ընդհանրապէս տարրերի 80 թիւը մեծ չափով կրծատել կարելի է: Ինչպէս որ բնութեան մէջ գործող զանազան ոյժերի թիւը հետզհետէ կրծատում է նրանով, որ շատ ու շատ տարրեր թուացող

ոյժերը նոյնանում են, երբ մարդ նրանց լաւ է ուսումնասիրում, այնպէս էլ մօտիկ ապագայում տարրերի թիւն է փոքրանալու՝ գտնելով, որ մի քանի տարրեր մի հիմնական տարրի զանազան ձևերն են: Այստեղ էլ գիտնականների գլխաւոր ձգտութիւն է գոյութիւն ունեցող երևոյթների բազմազանութեան մէջ միայն մի քանի երևոյթներ իրեւ հիմնական՝ այսինքն երկրորդականների պատճառ լինելը ցոյց տալը:

Բնական գիտութիւնները հետևողականօրէն դիմում են գէպի հետևեալ հարցի ապացուցումը—1. բնութեան մէջ գործող ոյժերը մի հիմունք ունեն, մի աղբեւրից են բղխում, մի միութիւն են կազմում. 2. բնութեան մէջ եղած նիւթերը-տարրերը մի հիմնական գոյացութիւն ունեն, մի հիմնական տարրից են բղխում:

**

Այս բոլորի հետ միասին տարօրինակն այն է, որ բնագէտը ոյժի և նիւթի գաղափարով է միայն աշխատում, առանց նրանց էութիւնն ու ծագումը համականալու, որ նա այդպէս էլ փայլուն գիւտեր է անում, որոնք հսկայական գործնական նշանակութիւն ունեն: Մինչև անգամ մենք չպէտք է զարմանանք, որ միշտագրի ալքիմիկուների (ոսկի շինել ցանկացողների) երազը—անպէտք իրերից ոսկի պատրաստել-կարող է մի օր յանկարծ իրականանալ և դրանով մեր ամբողջ աշխարհնատնտեսութիւնը մինչև այժմ չտեսնուած յեղափոխութեան ենթարկուել. այս, այս ամենը հնարաւոր է. սակայն ի՞նչ է ոյժը, ի՞նչ է նիւթը, ի՞նչ է նրանց էութիւնը, այս հարցերը մնում են այնուամենայնիւ անըմբոնելի:

Եթէ բնագէտները բնութեան երևոյթները լուսաբանում են, եթէ նրանք անծանօթ երևոյթների վրայ տարածուող խաւարը քայլ առ քայլ փարատում են, գրանով նրանք իսկապէս անըմբոնելին մի աստիճան էլ ետ են մզում. Նրան ըմբռնելն աւելի է զժուարանում և բարդանում: Միշտ էլ անբարեթեալ մումուց ոյժի և նիւթի գաղափարները ՄԱՐԴԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱԴԱԿԱՐԱԿԱՆ ԲՈՅԼՈՒՅԱ

ԲՆԱԿԻԹԵԱՆ ՕՐԵՎՐԵՄՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱ, ԽԱՉԻԿԻ ԱՅԱՍԻ ԱՅԱՆ

7/1. 1922

1. Պատճառական օրէնքը:

Երևոյթների լուսաբանութեան ժամանակ բնագէտը նկատում է, որ բոլոր երևոյթները մի որոշ կարգով են տեղի ունենում, որ ամեն ինչ պատճառի և հետևանքի օրէնքի համաձայն է տեղի ունենում, որ նոյն պատճառները միշտ և ամեն տեղ էլ նոյն յաջորդական հետևանքներն են ունենում, և այս այնպէս, որ բացարձակ և հաստատ կարելի է հետևանքից պատճառը եղածիացնել:

Բնական երևոյթների օրէնքի համաձայն լինելը, օրէնքի ենթարկուելը բացարձակ է. այս կազմում է բնական գիտութեան հիմնական կողմը. այլապէս բնուխուզութիւնը ոչ մի միտք չէր ունենայ, եթէ բնութեան այս կողմը ճիշտ չինէր: Աստղաբաշխը աստղերի շարժումներից հաշուելով՝ տարիներ առաջ յայտնում է, թէ Երբ վենուս-Արուսեակ մոլորակը պիտի արեի մօտից անցնի և ո՞ր կէտում է նա տեսանելի դառնում: Նա իր հաշուի մէջ այնքան վստահ է, որ գիտական բազմածախս ճանապարհորդութիւններ է սարքում, որպէս զի այդ անցքը դիտել կարողանայ.

սրա համար նա երբէք անհամսպիստ չի լինում, իր քունը չի խանգարում, վախճանալով՝ թէ մի գուցէ սխալ հաշուած լինի. ոչ, այլ եթէ Արուսեակի անցնելը գիշերուայ 11 ժամին տեղի ունենալու լինի, նա ամենայն հանգստութեամբ կապասի, առանց շտապելու մի ժամ առաջ կսկսի իր դիտակներն ուղղել կարգի գնել, մի խօսքով նա երբէք չի էլ կասկածում, որ իր այդ ձեռնարկութեան համար արած ծախսերը կարող են զուր անցնել, չի էլ տարակուսում, որ գէպքը կարող է մի բոպէ առաջ կամ ուշ տեղի ունենալ, քան թէ ինքը գուշակել է:

Նոյնպէս էլ բիմիկոսը. եթէ նրան տրուած է հըրդեհի փլատակների տակից հանած մի դիտակի չորացած արիւնը քննել, այդ գէպքում, նայած թէ իր գործիքը որոշ մոյք գծեր ցոյց է տալիս թէ ոչ, նա ըստ այնու էլ տալիս է իր վճիռը բացարձակ հաստատութեամբ և որոշում, թէ արդեօք այդ մեռած գտնուած մարդը հրդեհից առաջ կենդանի՞ է եղել, թէ մեռած—սպանուած, յետոյ այրուած.—այս բանը նա իմանում է չորացած արիւնը վերլուծելու ժամանակ.՝ նա իր գործիքի և գիտութեան անսխալ հաշիւներով հաստատ որոշում է և պնդում դրա վրայ, եթէ մինչև իսկ իր այս ցուցմունքի հիման վրայ դատարանը մի մեղադրեալի մահավճիռ կարդալու լինի:

Պատճառական օրէնքից առաջ եկած բոլոր երեսոյթների նմանատեսակութեան այս բացարձակութիւնը, ինչքան որ մինչև այժմ դիտուած է, կազմում է բնական գիտութեան յատկանիշն ու հիմնաքարը:

Շատերը տիեզերքը և իր հրաշալի երեսոյթները նմանեցնում են շոգենաւի արուեստաւոր կազմուածքի,

որի հրամանատարական կայանի վրայ կանգնած է նաւապետը, որը նաւին հանգստութեամբ առաջ է վարում ովկիանոսի վրայ. մեքենաների բոլոր կոճակներն ու մխոցները նրան յայտնի են և պտուտակների ու անիւների գարձը տեղի է ունենում կանոնաւոր միօրինակութեամբ. և երբ նաւավարը ձեռքը ելեքտրական ուղղիչի վրայ է գնում, այն ժամանակ այս վիթխարի կառուցուածքն իսկոյն կամ արագացնում է իր ընթացքը և կամ կանգ է առնում, նայած թէ առենակարող նաւալվարն ինչ է կամենում:

Այսպէս էլ տիեզերքի կառավարիչ ոյժը վարում է համաշխարհի ընթացքը խաղաղ և միապաղաղ. և երբ նա կամենայ, երբ նա իր ստեղծագործող վանկը արտասանի, այն ժամանակ համաշխարհի ընթացքը պիտի դադարի և կամ նոր երեսոյթներ պիտի առաջ գան, նայած թէ նա ինչ է կամենում:

Բնագէտն այս նմանութիւնը մերժում է. նրա համար գոյութիւն չունի աշխարհի մի զեկավար, որը պէտք եղած գէպքում, ամեն բոպէին համաշխարհի երեսոյթներին մի ուրիշ ուղղութիւն տալ կարողանայ. նա այն համոզմունքով է աշխատում, թէ բնութեան օրէնքներն ըստ իր ուսումնասիրութեան անխորտակելի են, նրանք յաւիտենապէս անփոփոխ են:

2. Ոյժի եւ նիվթի յարաւետսմթեան օրէնքները: Ընդհանուր պատճառականութեան օրէնքի կողքին ընդունում են երկու բնական օրէնքներ իրեւ ամենաընդհանրացածներ—ոյժի յարաւետսմթեան և նիւթի մնայունութեան օրէնքը. ոյժը և նիւթը յաւիտենապէս մնում են: Հարկաւոր է սրանց էութիւնը նկարագրել մի քանի խօսքով:

Քիմիկուը, որ կշիռը ձեռքին բռնած քննում է երևյթները, գտնում է օրինակի համար, որ ածուխի այրուելովը ոչինչ չի կորչում, այլ նիւթերն իրենց ձեն են փոխում միայն. ածուխից և օդի թթուածնից առաջ է գալիս ածխաթթու, սակայն նոր գոյացած նիւթի կշիռը հաւասար է նախկին բազկացուցիչ նիւթերի կշիռի:

Քիմիական վերլուծութեան օրէնքից յայտնի է, որ ոչնչից չի կարելի մի նիւթ գոյացնել, և ոչ էլ մի որևէ նիւթ կարող է ոչնչանալ: Համաշխարհի նիւթերի ընդհանուր գումարը մնում է յափտենապէս անվոփոխիս: Քիմիկոսի համար ոչնչից մի բան գոյացնելը բացարձակապէս անընդունելի է: Ֆիֆզիկոսն էլ գտել է, թէ ոյժը կարող է իր արտայայտութեան ձեւը փոփոխել—եթէ մի մարմին ցած է ընկնում, դրանով շարժման ձեն է փոխում, ոյժը չի կորչում. ծանրութեան ոյժից այն կէտում է տաքութիւն գոյանում, ուր որ ընկնող մարմինը դիմադրութեան է հանդիպում—այսպէս ծանրութեան ոյժը փոխարկում է տաքութեան ոյժի:

Շոգու խտացումից առաջ եկած ոյժը կարելի է ելեքտրական ոյժի փոխարկել. կարելի է շոգեմեքենայով տաքութիւնը շարժումի վերածել, շարժումն էլ կարելի է տաքութեան վերածել, օրինակ մի հասարակ շփումի ժամանակ: Եւ եթէ մենք չափող գործիքների միջոցով հետևենք ոյժերի այս ձեր փոփոխութեան, կդանենք էներգիայի-ոյժի յարատութեան—պահպանան օրէնքը: Համաշխարհի մէջ եղող ոյժերի համազումարի վրայ ոչինչ կարելի է աւելացնել եւ ոչ էլ նրանից մի բան ոչնչացնել:

Այս երկու օրէնքները—թէ նիւթն ու ոյժը չեն ոչնչանում, և ոչ էլ աւելանում—որոնք, ինչպէս ասացինք, աշխարհի ստեղծագործող Ոգու գոյութիւնը կարծես թէ առժամապէս ժխտում են, սրանք բընագէտի համար մնում են իրեն իր գիտութեան հաստատ ապացուցած հիմնակէտեր: Եթէ մինչև անգամ այս օրէնքները հնարաւոր չինէր փորձով ապացուցանել, նրանք արամարանօրէն պիտի եղրակացուէին:

Կանտի փիլիսոփայութիւնը, որ նոր գիտութեան հիմքն է գրել, ցոյց է տուել, թէ բնութեան մաթեմատիկո—բնագիտական օրէնքները մեր մտածելու օրէնքներից են կախուած, և այդ պատճառով էլ թէ ընդհանուր արժեք ունին և թէ անխորտակելի են: Մենք ընդունակ ենք ոչ այլ կերպ քան պատճառականօրէն մտածելու: Բնութեան օրէնստուն մեր բանականութիւն—խելքն է, մեր բանականութեամբ ենք նրա անպայման օրէնքները գտել: Բնութեան օրէնքներն ըստ իրենց էութեան տրամարանական օրէնքներ են, իսկ տրամարանութիւնը խելքից—բանականութիւնից է բղիսում:

Շատ մարդկանց համար բնութեան օրէնքները ոչ թէ տրամարանական են, այլ այսպէս ասած միւթողիական. այս տեսակէտով անհրաժեշտ է «բնական օրէնք» գաղափարի մասին մի քանի խօսք ասել: Այս դարձուածքը վերցուած է օրէնք իրութից, որը մարդկանց դէպի իրար ունեցած պարտականութիւններն ու իրաւունքներն է կարգաւորում:

Մարդկանց օրէնքն ասում է, դու պարտաւոր ես այս անել, դու պարտաւոր ես այն չանել, և մեզ համար կանոններ է սահմանում: «Բնական օրէնքն այսպէս չէ. երբ մենք բնական օրէնքը «բռնակալ» ենք անուանում, այդ կարող է մեզ մոլոր կարծիք կազմել տալ. բնական օրէնք ասելով մենք իրականութեան արտայայտութիւնը պիտի հասկանանք, թէ մի բան գոյութիւն ունի, տեղի է ունենում, պատահում է, և թէ դա միշտ էլ միատեսակ է պատահում, երեան գալիս. դա միանգամ այդպէս է, և ոչ թէ այդպէս պարտաւոր էր լինել, ինչպէս որ մարդկային օրէնքն է պատուիրում:

«Բնութեան օրէնքները» ասելով՝ բնութեան մէջ տիրապետող և որոշ չափով ազդող էութիւնները պիտի հասկանանք: «Բնութեան օրէնքներ» անունը՝ մեր հասկացած ձեռվ տուած արտայայտութիւն է. այս մի պակասաւոր, անկատար, զիտականի չափած ձեած, բայց և այնպէս թե բի արտայայտութիւնն է միայն, որը տրում է բնութեան մէջ պատճառից և հետևանքից առաջ եկած երևոյթների միօրինակութեան, ուրիշ խոսքով՝ բնութեան մէջ իշխող օրէնքներին:

3. Դարվինականութիւնը եւ աստիճանական զարգացումը:

Որոշ տեսակի կրօնասէր մարդիկ կան, որոնք մի տեսակ սրտնեղութիւն են զգում ամեն անզամ, երբ մէկ միւսի յետեից նորանոր բնական օրէնքներ են զըտնում: Այս մարդիկ ընդհակառակն բաւականութիւն և թեթեռութիւն են զգում այն ժամանակ, երբ նորագիւտ օրէնքներից մէկն իբրև սխալ հերքում է: Այս երևոյթը նկատեիլ էր մանաւանդ դարվինականութեան վերաբերմամբ:

Դարվինականութիւնը թէ և ներկայումս իր նշանշանակութիւնը հետզհետէ կորցնում է, թէ նրա թերութիւնները կամաց կամաց ճանաչւում են, բայց որովհետեւ այն ներկայ աշխարհահայեցքի համար դեռ մեծ նշանակութիւն ունի, դրա համար արժէ այսուեղ նրա մասին մի քիչ երկար կանդ առնել և մանրամասն խօսել:

Դարվին ինքը չէր այսպէս կոչուած աստիճանական զարգացման դիւտն անողը, այլ Ժէօֆուուա, Սանթ Հիլէո, Լամարք, Նոյնիսկ Գէօթէն դեռ առաջուց այն մութ կերպով զգացել, բայց պարզ որոշել էին—թէ բոլոր արարածները մի կամ մի քանի հիմնական սեռերից են կամաց կամաց այս բարձր զարգացման հասել, թէ ոչ թէ, ինչպէս Քուվիէն էր կարծում, շարունակ նոր ստեղծագործութիւններ և հին էակների լիովին ոչնչացումներ են տեղի ունեցել: Ներկայ կենդանիների և բոյսերի արիւնակից նախահայրերն են եղել այն նախապատմական կենդանիներն ու բոյսերը, որոնց մնացորդներն այսօր երկրաբանները գտնում են:

Այսպէս ուրեմն այս արդէն գոյութիւն ունեցող բայց անորոշ միտքը Դարվինը մշակեց, սիստեմի վերածեց և օրինակներով ապացուցեց, նա աշխատեց աստիճանական զարգացման բուն պատճառները պարզ ըմբռնել, որից յետոյ ապացուցեց, որ գոյութեան կոռւի և սեռական ընտրութեան ձգտումներն են աստիճանական զարգացման մղիչ պատճառները:

Նա այս բանը հետևեալ կերպով էր եղբակացնում. մարդը տնային անասունների բազմացման ժամանակ նրանց մէջ իր ցանկացած որոշ յատկութիւնները նրա-

նով է զարգացնում, որ կենդանիներից նրանց է ընտրում և բազմացնելու համար ծառայեցնում, որոնք իր ուղած յատկանիշները կրում են իրենց վրայ:

Ծների ցեղերը ազնուացնում են նրանով, օրինակ որսիշան, որ այն ջները միայն, որոնք ամենանուրը կազմուածքն ունեն, բազմացնելու են գործածում, իսկ միւսները ոչ: Ամենանուրը կազմուածք ունեցող ջների ընտրութեամբ մարդիկ կարողացան հետզհետէ իրենց համար ցանկալի եղած յատկութիւնը բարձրացնել և շան զարգացած-ազնիւ սերունդն առաջ բերել.

Հաս Դարվինի այդպիսի մի ընտրողութիւն կատարում է նաև ինքը ընութիւնը, օրինակ նապաստակների վերաբերմամբ: Ինչպէս փորձով գիտենք նրանք բոլորը հաւասար և նման չեն. նապաստակների ցեղի նախահօր առաջին սերնդի անդամների մէջ եղել են այսպիսիները, որոնք մնացածներից աւելի երկար ուներ են ունեցել, թէս, կարող է լինել որ այդ առըբերութիւնը շատ չնշին է եղել: Այս գէպքում, երբ աղուէները կամ ուրիշ յափշտակող գաղաններ սրանց ետեից ընկնեն, այն ժամանակ պարզ է, որ ամենաերկար ոտներով օժտուած նապաստակներն են, որոնք վտանգից ճռոպարելու և ոչնչացումից աղատ մնալու հնարաւորութիւնն ունեն. այս ձեռվ գոյութեան կոուի մէջ իրենց գոյութիւնը պահպանում են միայն երկար ունեցող ները: Մրանց սերունդը ժառանգում է ծնողների այդ յատկութիւնը. հետևեալ սերունդները դառնում են այսպիսով աւելի երկար ունեցող նապաստակներ, քան իրենց նախորդները, որովհետեւ սերունդների ընթացքում միայն երկար ունեցողներն են, որ իրենց գոյութիւնը պահել և սերունդ առաջացնել կաբող են:

Եթէ բնութեան մէջ տիրող գոյութեան կռուի այս խաղը մի քանի սերունդներ շարունակուի, այն ժամանակ ուների երկարութիւնը նապաստակների մէջ ըգգալի չափով կմհծանայ: Բացի զրանից, թշնամուց պաշտպանուելու համար սուր լսողութիւնն էլ է լաւ ծառայութիւն անում, դրանով թշնամու մօտենալն է իմացում. վերը յիշած հիմունքով ականջներն էլ հետզհետէ կղարգանան: Նապաստակների ատամների սըրութիւնն էլ խոշոր գեր է կատարում. երկարատես և ձիւնաշատ ձմեռներում այն նապաստակները, որոնք վատ ատամներ ունեն, ոչնչանում են, մինչդեռ նրանք, որոնք լաւ և սուր ատամներ ունեն, կարող են ծառերի կեղեներ կրծոտելով իրենց գոյութիւնը մինչեւ առաջիկայ գարունը երկարեցնել, ուրիշ խօսքով աննապաստ պայմանների դիմանալ: Այս ձեռվ ահա կատարեում է աստիճանական զարգացումը, համեմատաբար կարճ ուներ, թոյլ լսողութիւն և վատ ատամներ ունեցող նախահօրից առաջ է եկել մեզ լաւ ծանօթ արագավազ, լաւ լսող և կրծոտող նապաստակը:

Բնութիւնն ինքը ջոկում է կեանքի պայմաններին անյարմար արարածները և թոյլ է տալիս, որ նրանք ոչնչանան, իսկ յարմարները պահպանում են իրենց գոյութիւնը և հետզհետէ զարգանում, յառաջտղիմում են: Ամեն տեսակէտով կատարեալ յատկութիւններով օժտուած կենդանին, բնական է, որ ամենից աւելի յաւակնութիւն ունի իր գոյութիւնը պահպանելու և սերունդ առաջ բերելու: Ամենաուժեղ եղջերուն յաղթում է իր թոյլ հակառակորդներին և դրանով դառնում տպագայ սերնդի հայրը: Այս կերպ և ուրիշ կենդանիների մէջ:

Դարվինի առաջացրած հետաքրքրութիւնն այնքան մեծ էր, որ կարճ ժամանակում այսպիսի փաստերը մի հսկայական թիւ կազմեցին. սկզբում թուամ էր, թէ սրանք այդ տեսութեան,—գոյութեան կոռուի, գոյութեան պայմաններին յարմարւողների երկարակեցութեան և սեռական ընտրութեան—ուղիղ լինեն էին հաստատում: Սակայն հետզհետէ առաջ տարուող ուսումնասիրութիւնը ձեռք բերեց ուրիշ, աւելի մեծ թուով փաստեր, որոնք Դարվինի տեսութեան անկատարութիւնը ցոյց տուին, որոնք նրա թոյլ կողմերը մատնացոյց արին և ապացուցին, որ նա, չնայած իր ունեցած սրամտութեանը, գեռ բնութեան մէջ իշխող իսկական օրէնքը չի գտել:

Սակայն սրանով այն մարդիկ, որոնք Դարվինի ուսումնաքի շնորհիւ իրենց հաւատը դէպի Աստուծոյ ամենակարողութիւնը կորցնել էին կարծում, իսկապէս ասած գեռ ամենեին ոչինչ չեն շահում: Այսպիսի գէպքերը գուցէ կարողանան գիտակից բնագէտին մի քիչ համեստութեան սահմանների մէջ պահել նրան յիշեցնել, թէ մարդկային գիտութիւնը գեռ իսկապէս ինչ-քան պակասաւոր է: Այսուամենայնիւ այս ինքնագիտակցութիւնն էլ Աստրւծոյ գոյութեան համար գեռ տեղ չի բաց անում, որովհետեւ եթէ բիօլոգիական գիտութիւնը սովորեցնում է, թէ այն պատճառները, որոնց Դարվինը իր օրգանի զարգացման մղիչ ոյժն էր ընդունում, և թէ գոյութեան կոիւը և սեռական ընտրութիւնն իրենց այն մեծ նշանակութիւնը չունեն, ինչ որ Դարվինը նրանց էր վերագրում, այնուամենայնիւ բիօլոգիան չի դադարում ընական զարգացման համար մեքենայական դրդիչ պատճառներ

որոնելուց, այլ բերում է ուրիշ բնական հիմունքներ: Եթէ մէկը Դարվինի թէօրիով իրեն վիրաւորուած էր զգում, որ իր նախապատերը չորս ձեռներ են ունենալիս եղել և ծառերի վրայ ապրել, նա այս տեսութեան անկումով գժուար թէ աւելի լաւ նախապատերի արժանանայ, որովհետեւ աստիճանական զարգացման ուսումը—թէ բոլոր օրգանական մարմինները մի կամ մի քանի պարզ, հիմնական ձևերից են աստիճանապէս զարգացել և առաջ եկել ու այսպէս ասած բնական պատճառներով (ոչ ստեղծագործութեամբ) զարգացել—դեռ չէ ոչնչացել և իր նշանակութիւնը չի կորցրել, թէն չի ել ապացուցուել, այլ մնում է իրեն կենսաբանական (բիօլոգի) հիմնական մի սկզբունք:

* *

Այս պատճառով զուր է թէ զարվինականութեան և թէ նորագոյն բնախուզութեան մասնակի կէտերի գէմ եղած հակառակութիւնը: Եթէ այսօր մինչեւ իսկ հաստատ ապացուցուած բնական օրէնքները սխալ զուրս գային, հիւլէաբանութեան տեսութիւնը հերքուէր, Նիւառնի ձգողականութեան օրէնքը կասկածի ենթարկուէր, զրանով բնախուզութեան հիմնաբարը, այն հաստատ-համոզմունը, թէ բնական բոլոր երեւոյթները խիստ և անփոփոխ օրէնքը կամաձայն են կատարում, երբէք չէր խախտուի: Եթէ այս սկզբունքից ձեռք վերցնենք, այն ժամանակ կարող ենք այսպէս ասած բնանկարագրութիւն միայն ունինալ, և ոչ բնախուզութիւն—ուսումնասիրութիւն, որը միայն իսկական գիտութիւն կոչուել կարող է:

ԲՆԱԽՈՒՁՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Այս կամ այն բնական օրէնքը ջրելովը կամ մերժելովը Աստուծու համար տեղ պատրաստել չի կարելի: Բնախուզութիւնն իր էութեամբ է և կմնայ անտառուած:

Այս մի փաստ է և մենք պարտաւոր ենք այն լրջօրէն հաշուի առնել: Բոլոր յոյսերը, թէ բնագիտութիւնը կարելի է հաւատացող գարձնել, զուր են կորչելու. բարեպաշտութիւնն ու աստուածաբանական գիտութիւնը չեն կարող այդ գիտութեան համար նպատակներ որոշել, ոչ էլ նրա ճանապարհը նեղացնել կամ կարձացնել:

Այս յոյսը թէ գուցէ միանգամ հնար լինի մի մանրագիտակով կամ հեռագիտակով Աստուծու հանգերձի մի ծայրը ընութեան մէջ մի որևէ կէտում նշանակում, բոլորովին դատարկ է: Աստուածաբանն ու աստուածապաշտը երբէք իրաւունք չունեն իբրև այդպիսին բնագէտի աշխատանքին խառնուելու, եթէ նա իր գիտութեան սահմաններում է մնում. սակայն հէնց որ նա այդ սահմաններից դուրս է գալիս, այն ժամանակ իրաւունք ունեն նրա գէմը դուրս գալու:

Մենք աեսանք, որ բնագէտն ամենից առաջ աշխատում է իր գիտած երևոյթները պարզել. պարզել նշանակում է մի բան հասկանալի և որոշ մտքերի վերածել. եթէ մենք ուշադրութեամբ դիտենք, կտեսնենք, որ այս սովորական մտքերը ըստ իրենց ներքին էութեան մեզ բոլորովին օտար, անծանօթ են. մենք չենք ըմբռնում այդ մտքերը այնպէս, ինչպէս սովորաբար նրանք մեզ ներկայանում են, կամ թւում են: Ցիշենք

օրինակ նիւտոնի երկնային մարմինների շարժման աեսութիւնը, որով նա ցոյց տուեց, թէ ծանրութեան նոյն օրէնքով, որով ընկնող քարը դէպի գետին է ձըդտում, մեր համաշխարհն է կառավարւում: Հասկանում ենք արդեօք՝ ծանրութիւն ասածն ինչ բան է:

Իսկապէս վերցրած քարի ընկնելու երևոյթը մեզ բոլորովին մուլթ է. երկրի ձգողական ոյժը մեզ նոյնապէս անըմբռնելի է ամբողջովին: Ճիշտ նոյնն է լոյսի և եւքարական ոյժի ճառագայթներն իբրև եթերի ալեւձն տատանումներ ընդունած բացատրութիւնը. արդեօք հասկանում ենք մենք այս, կարմղ ենք մեզ պարզ հաշշիւ տալ, թէ այդպէս ասելով՝ մենք ինչ ենք ըմբռնում:

Մենք երկակայում ենք, թէ նրանով մի բան գիտենք, երբ լոյսի ճառագայթների ալիքների և ջրի ալիքների շարժումների մէջ մի նմանութիւն ենք զբանում: Ինչպէս ասել ենք, այս ճանաչողութիւնը գործնական հսկայական նշանակութիւն ունի, բայց գրանով իբրերի ներքին էութեան ճանաչողութիւն (Erkenntnis) չենք ձեռք բերում. հէնց մէկ՝ եթեր ասած բանն էլ ինչ է, այդ անուան տակն ինչ ենք հասկանում:

Բնագէտների այս բաների մասին տուած մեկնութիւններից բնութեան միջի անմեկնելին մի աստիճանով էլ աւելի գժւարանում է, փոխանակ հակառակը լինելու:

Մեր գիտութիւնը կարող է այնքան առաջ գնալ, որ մեզ հասկանալի գարձնի, թէ ինչպէս բնութեան միջի բոլոր տարբեր ոյժերը ուրիշ բան չեն, բայց եթէ միայն մի ոյժի տարբեր ձևի ներգործութիւնները, թէ ինչպէս բոլոր այս տարբեր տարբերը, ինչպէս, ոսկի,

Երկաթ, բորակածին և այլն, ուրիշ բան չեն, քան եթէ մի էական սուբստանցի տարրեր ձեի արտայայտութիւնները: Սրանց մասին գիտութիւնը կարող է հաստատ պնդել:

Սակայն ոյժի և նիւթի էութեան ինչ բան լինելու ճանաչողութիւնը, ըմբռնումը, նրանց բացատրութիւնը են և կմնան անհասկանելի: Մենք ստիպուած ենք ոյժը և նիւթը մի անգամ իբրև իրականութիւն ընդունել, իբրև արուած բան: Այս երկուսը կազմում են մեր ընութիւնն ըմբռնելու կարողութեան համար երկու անանցանելի սահմանագծեր:

Մօնիստական վարդապետութեան հետևող մի քանի բնագէտներ էլ աւելի առաջ գնացին և առանց այլ և այլութեան սուբստանցի գոյութիւնը ժխտեցին: Այս երկոյթն աւելի լաւ է ապացուցանում մեր կարծիքը, թէ իսկապէս սուբստանցի, գոյացութեան էութիւնը անըմբռնելի է: Հոչակաւոր քիմիկոս Օստվալդը ասում է, թէ կարելի է սուբստանցի գաղափարն ուրանալ, թէ գիտութիւնը կարող է առանց նրան էլ լինել: Նա այն կարծիքն է պաշտպանում, թէ միայն մաթեմատիկական այսպէս ասած ուժակէտեր գոյութիւն ունեն, կէտեր, որոնցից ոյժ կամ զանազան ոյժեր են բղիում: Օստվալդը մեծ իրաւունք ունի ընդունելով, թէ անհրաժեշտ չէ անպատճառ, որ ոյժի նիւթական հիմքեր—աղբիւրներ գոյութիւն ունենան. մի մաթեմատիկական կէտ, որն իր շուրջը ոյժ է տարածում, և օրինակ մեր կաշու վրայ ազդում է, թւում է մեզ թէ նա ամուր կամ ծանր բան է, որ մեր կաշու վրայ ճնշում է. այսպէս է մեր նրանից ստացած տալաւորութիւնը, թէն նա մեր կաշին երբէք անմիջապէս չի շօշափում:

Եւ եթէ այս կէտի ոյժը մեր աչքի վրայ է ազդում, այն ժամանակ այդ կէտը մեզ գոյնի տպաւորութիւն է ներշնչում—ազդում:

Եթէ այս ձեով մենք Օստվալդի հետ սուբստանցային հանելուկը կամայականորէն մի կողմը թողնենք, բնագէտի և մեզ համար ոյժի էութեան հանելուկը միշտ էլ անլուծելի կմնայ:

Անհրաժեշտ է մի ուրիշ բանի վրայ էլ մատնացոյց անել, մեր ըմբռնողութեան որոշ սահմանափակութիւնն առաջ է գալիս մեր իմացականութեան գործարանի անկատար լինելուց: Վերսում իսուք եղաւ լոյսի ալիքների, որոնք համեմատարար աւելի փոքր երկարութիւն ունեն, և ելեքտրական ալիքների մասին, որոնք աւելի մեծ երկարութիւն ունեն: Այս ալիքները միշտ էլ գոյութիւն են ունեցել, թէև մենք շատ ուշ ենք գրանց մասին իմացել: Գիտնական չէցը հնարեց գործիքներ, որոնց միջոցով այդ ալիքները տեսնել կարելի եղաւ, նա զինեց մեր զգայարանքները և դրանով մեզ հնարաւորութիւն տուեց միանգամից ոյժի նոր ձեեր և արտայայտութիւններ տեսնել. մենք կարողացանք նոր երկոյթներ գտնել այնտեղ, ուր մեզ առաջ թւում էր՝ թէ ոչինչ չկայ: Լուսանկարչական գործիքի միջոցով նկատեցինք, որ որոշ ճառագայթներ գոյութիւն ունեն, որոնք հասարակ աչքից անտեսանելի են մնում: Այս սկզբունքի հիման վրայ կարող ենք հաստատ ասել, որ բնութեան մէջ ուրիշ անթիւ ոյժեր էլ կան, որոնց համար մենք դեռ յատուկ գործիքներ չունենք, ու այդ պաշտճառով էլ կարծում ենք թէ նրանք գոյութիւն չունեն:

Մեր զգայարանքները դատապարտուած են գո-

յութիւն ունեցող երևոյթների միայն մի վորք մասի գոյութիւնն զգալուն, նրանք այդ երևոյթների միայն մի որոշ թուին յարմար են կաղմուած: Ամեն օր կարող ենք նորոնոր ոյժեր ճանաչել-գտնել, որոնց գոյութիւնը երեկ մեզ համար անյայտ է:

Բնութիւնն ըմբռնելու համար եղած մեր այս «սահմանափակութիւնը» ուրիշ կերպ է, քան վերեւում յիշածը. այս խսկապէս վերցրած մի սահմանափակութիւն չէ, մի որոշ սահման չէ, որից այն կողմն անցնելը կարելի չլինէր, ինչպէս ոյժի և նիւթի էութիւնն ըմբռնելու բացարձակ անկարելիութիւնն է. աչ, այս տեղ մեր մաքի սահմանափակութիւնը միայն մի թերութիւն կարելի է անուանել, որը միշտ էլ կարող է կատարելագործուել: Այս խօսքերով մենք ուզում էինք ցոյց տալ, թէ ըմբռնողութիւնը գեռ որքան անկատար է:

Բնագիտութիւնը չի կարող վերջապէս ամեն ինչ պարզել. Եթէ մեր զգայարանքները բոլորովին կատարելագործուեն և դրանով մեր ըմբռնելու անկատարութիւնը վերանայ, դարձեալ բնագիտութիւնը կհասնի որոշ սահմանների, որից այն կողմը անցնել իր ձեռքում եղած բոլոր միջոցները գործադրելով հանդերձ՝ չի կարողանայ:

Բնութեան ոյժի անըմբռնելիութիւնը մի գաղափար է, որը մեզանից ենք հնարում, մեր հասկացողութեան մէջն է կաղմուում, այդ գաղափարը մեր զիտակցութեան մէջ գոյութիւն ունի: Մեր մէջ կայ այդ ոյժի զգայութիւնը և մենք այդ փոխագրում ենք արտաքին

աշխարհի երեսոյթների վրայ, վերագրում ենք նրանց, ու կարծում ենք, թէ դրսից ենք այդ զգայութիւնը կրում:

Եթէ մենք ուզում ենք մի մկանի շարժում առաջացնել, ստիպուած ենք այն բանը գործադրել, որին մենք ոյժ անուն ենք տալիս. այս ձեռվ էլ ընդհանրապէս մենք ուր որ մի շարժում ենք տեսնում կամ զգում, ընդունում ենք, թէ այդ շարժումը առաջանող մի ոյժ գոյութիւն ունի: Ինչքան էլ մեր միջի ոյժը մեզ բոլորովին պարզ նկատելի և որոշապէս զգալի երեկի, դրսի աշխարհի ոյժը այնուամենայնիւներկայանում է մեզ իրրե անմեկնելի հանելուկի նման մի բան:

Եթէ մենք ցանկանում ենք բնական գիտութիւնների մէջ կրօնի համար մի տեղ պատրաստել, չպէտք է այդ տեղը նրանց սահմանների մէջ որոնել: Եթէ մի քանի մինչև այժմ ընդունուած բնական օրէնքներն իսկապէս բոլորովին անհիմն զուրս գան, և ապագայում էլ նման զէպքեր առաջ գան, զրանով հաւատքի համար ոչ մի չնչին շահ անգամ չի գոյանայ:

Բնութեան օրէնքներն ըմբռնելու մեր կարողութեան սահմանը նմանեցնենք մի. ցանկապատի. ցանկապատը բաժանում է թէև ըմբռնելին անըմբռնելից, բայց այդ բաժանումն այնքան էլ խիստ չէ, կարելի է ցանկապատի արանքներից միւս կողմը տեսնել. ուրիշ խօսքով դա կատարեալ արգելք չէ, այլ մի անկատար սահմանի է նման. զրանից այն կողմն է գտնուում տիեզերքի ողին. սակայն եթէ մենք աստուած—ողին

իսկապէս որոնել ենք ուղում, չպէտք է ցանկի արանք-ների միջով նայենք, այլ նրա վրայից, որպէսզի անարգել և լիովին նրան գտնենք:

Որտեղ որ մեր բնութիւնն ըմբռնելու և ճանա-չելու կարողութիւնը սահմանի է հանդիպում, ահա այդ-տեղից այն կողմումն է, ուր Աստուած պիտի փնտուել:

ԲՆԱԳԵՑՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՒԱՏՔԻ ԴԵՄ

Այն բնագէտին, որը կարծում է թէ իր ուսում-նասիրութեան մեթոդների և կամ իր դիտելու գործիքների միջոցով իր մասնագիտութեան սահմաններից դուրս էլ կարող է վճիռներ կայացնել, նրան մենք ամենայն իրաւունքով և վստահօրէն կարող ենք ետ մղել:

Շատ ժամանակներից ի վեր եղել են բնագէտներ, որոնք իրենց բնագիտական փաստերի հիման վրայ աշխատել են աստուածապաշտներին ցոյց տալ, թէ նրանց հաւատքը ոչ մի հիմք չունի: Ակսած Լապտակից, որը նապօլէօն առաջինին ասում էր—Տէր, ամբողջ երկինքն իմ դիտակով չափեցի ու ձեւցի, Աստու-ծու համար սակայն ոչ մի տեղ չգտայ—մինչև մեր օրերը բնագէտները ուժեղ պայքար են մղում հաւա-տացողների դէմ, նրանք դործ են ածել շատ տարրեր զէնքեր իրենց կոռուի մէջ, երբեմն ծաղը ու հեղնանք, երբեմն ատելութիւն ու թշնամանք, երբեմն էլ սառն արհամարհանք:

Աստուծու գոյութեան գաղափարի ամենայայտնի թշնամիներից մէկը էրնատ Հեքէլն է, որը և միաժամանակ կրօնի դէմ մէծ յաջողութեամբ կոռողներից, է: Նրա «Համաշխարհային հանելուկներ» անուն

գիրքն արտաքուստ մի անօրինակ յաջողութիւն ունեցաւ: Ինչքան էլ նա՝ իրեւ բնագէտ իր մասնաճիւղ կենդանաբանութեան մէջ մեծ դիտնական է, ինչքան էլ նշանաւոր են նրա գիւտերից շատերը, այնքան էլ կուրացած է նա իր առհասարակ դէպի կրօններն ու-նեցած ատելութեան մէջ, և այս մինչև այն աստիճան, որ իր խոհականութիւնը, որը ամեն մի բնագէտի լաւ յատկանիշն է, այս պայքարի մէջ բոլորովին կորցրել է:

Եթէ Հեքէլը փաստաբանում է, թէ աներկայ խոր-հըրդաւոր աստուածասիրութիւնը (mystische Theosophie) մի անձնաւորեալ աստուած իրեւ անտեսանե-լի—Ճիշտն ասած իրեւ մի գաղային (!) էտթիւն պաշտում է, և նրան միաժամանակ մարդու նման մտածել, խօսել և գործել է տալիս, ու այդպիսով մի տարօրինակ գաղային ողնաւոր կենդանու գաղափարին է յանդում», ապա նա սրանով կորցնում է այն հողը, որի վրայ միայն լուրջ վիճաբանութիւնն սկսելը հնարաւոր է:

Նա մոռանում է, որ մեր ունեցած բնութեան ճանաչողութիւնը, հակառակ իր արած մեծ առաջադի-մութեանը՝ դեռ բոլորովին հեռու է երևոյթների խկա-կան էռթիւնը ճանաչելուց: Թէկ նա տեսականօրէն ըն-դունում է, որ մեր ճանաչողութիւնը դեռ շատ սահ-մանափակ է, բայց և այնպէս ինչպէս յայտնի է, ձեւակերպում է մի կրօն, մօնիստութիւն անունով, և մի նեղ, զուտ մօնիստական աշխարհայեացք, և այս բանը նա հիմնում է բնագիտական ուսման հիմունքների վրայ: Նրա ստեղծած այս կրօնն ու աշխարհայեացքն իրենց ձգտումովը դէպի հոգեկան աշխարհի երևոյթների ըմբռնումը և մեր գատողութեան վղին դժուար

և անհասկանալի պահանջներ դնելովը աւելի առաջ են անցնում. այդպիսի պահանջներ չի անում մինչև իսկ քրիստոնէական կրօնն ու աշխարհայեացքը:

Հէքէլն իրեն թոյլ է տալիս այս տարօրինակ ձեւակերպումն անել, որպէսզի մեր ունեցած բնութեան ճանաչողութեան սահմանի ամենակարեոր կէտի վրայից անցնել կարողանայ. այս անում է նա այն ժամանակ մանաւանդ, երբ մեր ինքնագիտակցութեան գոյութիւնը պարզել է ուզում:

Շատ բնական է, որ մի գօգմատիկ, ինչպէս Հէքէլն է, որը «աստիճանական զարգացման» անունով է երդում, չի կարող մեր ինքնագիտակցութիւնն իրրե մի իրական և սկզբից ի վեր մեղ տւած մի բան ընդունել. անպատճառ անհրաժեշտ է, որ դա հետզհետէ «զարգացած» լինի: Սրանից աւելի պարզ ի՞նչ կայ, եթէ մենք ատոմին մի որոշ չափով անգիտակից գիտակցութիւն վերագրենք, ասում են նրանք: Դրանով ինչիրը շատ պարզ լուծումն կստանայ—ատոմի ինքնագիտակցութիւնից բնականօրէն զարգանում, կամաց-կամաց առաջ է պալիս մարդկային հոգին. բայց որ այդ «հոգի ունեցող» ատոմը «գագային ողնաւոր կենդանու» հետ միենոյն աստիճանի վրայ է կանգնած, Հէքէլն այդ տեսնել չի ուզում: Զէ՞ որ երկուսն էլ նոյնն ասել է:

Թէ ինչու ատոմական հոգու գոյութիւնն աւելի հեշտ հասկանալի է և նրա գոյութիւնն ընդունելն աւելի գիտական պէտք է լինի, քան մի տիեզերական ոգու գոյութիւնը, մենք անկարող ենք հասկանալ:

* *

Այս վերջին երեսներում մանրամասն խօսելով՝

ինդրի կարեոր կէտերից մէկը շօշափեցինք: Վերեռում արդէն յիշած բնութեան ճանաչողութեան սահմանի, սուլքստանցի էութեան, ոյժի էութեան ըմբռնումի մասին եղած գժուարութեան վրայ աւելանում է հետեւեալ կարեոր գժուարութիւնն էլ,—դա ինքնագիտակցութեան գոյութեան ըմբռնումն է:

Ոչ մի մաթեմատիկական տարազով, ոչ մի կշիռով և չտփով և ոչ էլ մի որևէ մանրազննին գործիքով հնարաւոր չէ մեր գիտակցութեան էութիւնը, ուրիշ խօսքով ասած, մարդու ինքն իր մէջ մի բան իմանալու, ըմբռնելու կարողութիւնը պարզել:

Մենք կարող ենք լոյսի ճառագայթի մէջ երերուող եթերական մասնիկին մինչև մեր աչքի ցանցաթաղանթը հետեւել և ցոյց տալ նրա կատարած ազդեցութիւնը, սակայն երբէք չենք կարող պարզել, թէ ի՞նչպէս է լինում, որ այս եթերական մանրիկ մասնիկի հարուածը մեր ցանցաթաղանթի նեարգերի ծայրերի վրայ կարողանում է լոյսի կամ զոյնի տպաւորութիւն առաջ բերել: Ճիշտ այս ձեռվ էլ բոլոր միւս բնական երեոյթներն են. մենք կարող ենք ցոյց տալ, որ ջութակի լսորի տատանումները օդի սլիքների միջոցով կարող են ականջի թմբկաթաղանթին անցնել և լսողական ոսկրիկների միջոցով լսողական նեարգերի ծայրերին, բայց երբէք չենք կարող պարզել, թէ ի՞նչպէս այն երեոյթը, որին մենք ճառագայն ենք անուանում, օդի տատանումներից ծագել կարող է, ոչ էլ մեկնել, թէ ի՞նչպէս հնարաւոր է, որ օդի այս պտոյտը երբեմն մեղ բարձր հիացմունք է պատճառում, եթէ մի երաժեշտ է նուազում, երբեմն էլ անախորժ սարսուռ ազդում, երբ մի սկսնակ է ջութակի լարերը ճզճացնում:

Զգայութիւնը, զգալը և զգացածին զիտակից լինելը կազմում են ահա այսպէս ընական զիտութեան համար մի երրորդ անհասանելի սահման:

ՀՈԳԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

- #### **1. Մարմնի եւ հոգու մէջ եղած կապակցութիւնը:**

Ոյժի և նիւթի պահպանման ու տեղութեան,
կշռի և չափի գործածութեան և տարտղի ու թուրի օ-
բէնքները կորցնում են իրենց նշանակութիւնը, ան-
գործածելի են գառնում, հէնց որ մենք անցնում ենք
սրտի և հոգու կեանքի երեսյթները դիտելու:

Փորձեր են եղել մարդուս հոգեկան կեանքը նոյն-
պէս բնագիտութեան սահմանի մէջ առնել և նրան զա-
նազան փորձերի ենթարկել: Հոգեբանութեան մի ճիւղը
կոչւում է բնախօսական-մարդակազմական հոգեբանու-
թիւն. այս գիտութիւնը գտել է, որ արտաքին երե-
ւոյթների մեջ վրայ թողած տպաւորութեան և զգայու-
թեան սահմանում օրէնքների մի որոշ կարգ կայ, սա-
կայն այս կարգը գտնուում է—ու այս հանգամանքը
պէտք է անպատճառ շեշտել —ոչ թէ հոգեկան կեանքի
սահմանի, այլ նրա մարմնական կեանքին ուղեկցող
երեսոյթների մէջը: Զպէտք է ուրանալ, որ այս գիտու-
թիւնները կրօնի համար բաւական վտանգաւոր են
եղել, աւելի վտանգաւոր, քան բնագիտութեան, ար-
տաքին երեսոյթների մասին եղած տեսութիւնները:
Խօսքը, օրինակի համար, մասնակի զգացութիւնների
աեղափակման (Lokolisierung) վաստի մասին է, թէ
շօշափելիքի զգայութեան ժամանակ ուրիշ մասերն են
գործում, և լսելու զգայութեան ժամանակ ուրիշ. թէ

ուղեղի որոշ մասերի վաստելովը մենք որոշ ընդու-
նակութիւններ երբեմն կորցնում ենք, օրինակ, խօսհ-
լու, երգելու, և այլն։ Նման փորձերի հետեանքով
թւում էր սկզբում, թէ հոգին մարմնին ենթակայ մի
բան է, թէ նա անկախապէս գոյութիւն չունի։

Այս կարծիքի խիստ և որոշ բնորոշումը Քարլ-
ֆոկթուսը տուեց իր հետեւալ արտայայտութիւնով—
մտքերն ու գաղափարները յարաբերում են ուղեղին
այնպէս, ինչպէս երիկամունքներից արտաթորուածը
(մէզը) երեկամունքներին. պարզ ասած, ուղեղն էլ իր
ստացած տպառութիւնների միջոցով մտքեր ու գա-
ղափարներ է արտաթորուած:

Շատ պարզ պատճառով անընդունելի է մտքերը
իրեւ ուղեղը գործունէութեան նիւթական արդիւնք
համարել. բայց և այսպէս չի էլ կարելի կասկա-
ծել որ այն երևոյթները, որոնց մենք հոգեկան կամ
մտաւոր ենք անուանում, ունեն իրենց համապատաս-
խան մարմնական նշանները. օրինակ, լոյսի զգայու-
թեանը համապատասխանում է մեր աչքի տեսողու-
թեան նեարդերի մէջ մի երևոյթ, ցաւի զգայութեանը
համապատասխանում է գարձեալ մի երևոյթ մեր մորթի
նեարդերի մէջ. և դեռ աւելին, այս երկու երևոյթները
համապատասխանում են մեր ուղեղի մէջ գարձեալ ուրիշ
նիւթական երևոյթների: Երբ ուղեղի որոշ մասերը
փշտնում են, օրինակ, աչքին համապատասխանող
մասը, այն ժամանակ մեր աչքը կարող է բոլորովին
առողջ մնալ, բայց մենք չենք տեսնի, երբ ականջին
համապատասխանող մասը փշանայ—էլ չենք լսի. ա-
կանջը կարողէ թէեն հիանալի գործել, ձայնը հաղորդելու-
կանին, բայց մենք չենք լսի, եթէ մինչև իսկ անհա-
ղեղին,

մար ձայների ալիքներ մեր թմբկաթաղանթն ուժգնապէս շառաչեցնեն:

Այսպէս կոչուած «բնախօսահոգերանական զուգահեռականութիւնը» այսպէս թէ այնպէս գոյութիւն ունի անկասկած: Եթէ ոչ բոլորի, գոնէ շատ ու շատ գիտակցական և մտածողական երեսյթներին համապատասխանում են բնախօսականն-մարդակազմական, մարմնական երեսյթներ: Սակայն բնախօսահոգերանութեան տուած տրդիւնքները միայն մի որոշ զուգահեռականութիւն ապացուցանելու սահմանից այն կողմը չեն անցնում, հազիւ այդքանն են ցոյց տալիս, իսկ պարզ է, որ զուգահեռականութիւնը նոյնութիւն չի նշանակում երբէք:

Ինչպէս յայտնի է, մարմնի դէպի հոգին ունեցած յարաբերութիւնը նմանեցնում են նուագարանի և նուագրդի մէջ եղած յարաբերութեանը. եթէ մենք այս համեմատութիւնն ընդունենք, այն ժամանակ պէտք է մեր մարմնի մէջ, որն իրբե նուագարան ենք վերցնում, անշուշտ նուագարանի մատներն ու սուլիչները գտնենք և ցոյց տանքք: Բնախօսական հոգերանութիւնը գտնում և ցոյց է տալիս մեր մարմնի մէջ նուագարանի թելերն ու օդատար խողովակները, բայց երբէք չի կարող ապացուցանել, որ մարմին—նուագարանը ինքն իրեն է հնչում. բնախօս հոգերանը դեռ չի կարողացել նրա մարմին-նուագարանի ներքին մարդը, այդ արուեստագէտը, որի շնորհիւ միայն նա խօսուն ու գործօն է դառնում, հեռացնել, իր դերից զրկել:

Իսկական բնագէտի համար մօնիստական կրօնը —ըստ Հէքէլի բնութեան միականութիւնը—հէնց նրա-

նով է սխալ, որ ընդունում է, թէ հոգու և մարմնի մէջ եղած յարաբերութիւնն իսկապէս գոյութիւն ունի: Մարմինն ու հոգին իրար մօտ այնպէս են, ինչպէս երկու անհամեմատելի և տարրեր մհծութիւններ:

Ես՝ ես եմ. մեր հսութեան զգացմունքն այնպէս անմիջական է, այնպէս կենդանի, որ մենք մեր ուրիշ ոչ գիտակցութեան մէջ այնպէս վստահ չենք, ինչպէս մեր հսութեան մէջ: Մենք մեղ զգում ենք իրբե մի ամբողջական, մտածող էութիւն, մի այնպիսի ակներե վստահութեամբ, որ բացարձակապէս ըմբռնել չենք կարող, թէ եսի գաղափարը մեր ուղեղի ծալքերի մէջ եղած եթերական նիւթի տատանումների, կամ ուղեղահանգոյցների բջիջների թելիկների մէջ եղած ելեքտրական հոսանքի մի արդիւնքն է: Մեր այս գիտակցութիւնը բոլորովին վստահելի և անմիջական է, ու բացարձակապէս անկարելի է համոզուել, թէ ինչո՞ւ մեր այս փորձնական փաստի գոյութեանը—թէ մենք կանք, թէ մենք իրբե ես ենք զգում—աւելի պակաս չափով հաստատ համոզուած պիտի լինենք, քան թէ մեր զգայանքների փորձերին, օրինակ այն բանին, որ արեն ամեն առաւօտ ծագում է և իրեկոյեան մայր մտնում: Մեր եսի գոյութեան գիտակցութիւնը մեղ այնպէս հաստատ է թւում, ինչպէս արեմի օրական շարժումներն են:

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐԹՐՆ ՓՈՐՁ

1. Եսի գիտակցութիւնը:

Զպէտք է մոռանալ, որ առհասարակ ամեն մի փորձ—զգայութիւն, արտաքին թէ ներքին՝ ամենից առաջ ներքին փորձառութիւններ են: Մեր

Ներքին տպաւութիւնների միայն մի մասն ենք ար-
տաքին աշխարհի ազգեցութեանը վերագրում: Իսկա-
պէս ասած մենք դեռ մի արտաքին աշխարհի դայու-
թիւն ունենալուն վստահ չենք, այլ միայն մեր տպա-
ւութիւններին ենք վստահ, որոնց իբր առաջացնող
պատճառ համարում ենք արտաքին աշխարհը:

Գերմանացի նշանաւոր փիլիսոփայ Ֆիլիպին առում է, թէ միայն գերաշխարհայիլն (transcendental), արտաքին աշխարհից բարձր եղած եսը, իսկական հոգին ճշմարտապէս գոյութիւն ունի: Նատ փիլիսոփաներ այս միտքը ընդարձակում են մինչև այնաեղ, որ նրանք մինչեւ անզամ միայն փորձառական, մասնակի եսին, անհատական հոգուն են գոյութեան իրաւունք տալիս: Մենք չենք կարող այսքան առաջ գնալ. արտաքին աշխարհը գոյութիւն ունի, նա իր իրականութիւնը նրանովէ արտայայտում, որ արտաքին աշխարհից ստացած զգայութիւն—տպաւորութիւնը շատ անհից ստացած կարող է արտայայտում, որոնց գոյութեանը մենք չենք կարող հատների վրայ, որոնց գոյութեանը մենք չենք կարող կասկածել, նմանօրինակ է: Մենք բոլորս միաժամակական ենք տեսնում արեի լոյսը. այս միօրինակ և միանակ ստացած տպաւորութեան շնորհիւ մենք կաժմամանակ ստացած տպաւորութեան իսկական լուսնը կարծիքներ փոխանակել, բող ենք նրա մասին խօսել, կարծիքներ փոխանակել, ու գրանովէլ այդ տպաւորութիւնն առաջացնող պատճառի իրականութեան զգայութիւնն ենք ունենում, մի աւելի մեծ իրականութիւն՝ քան իսկապէս մեր ներքին տպաւորութեանը թւում է: Այս տպաւորութիւնն ամեն անհատ իր համար առանձին ստանում է. մենք չենք կարող այն միասեսակ և միասին զգաւ մենք չենք կարող այդ երկոյթը հեշտութեամբ և ճշուած իրար հաղորդել. այս պատճառովէլ էլ է անշուշտ,

որ մարդ շատ անդամ անհատական, զուտ ներքին, հոգեկան տպաւորութիւններին այնպէս բացարձակ վստահութիւն չի լնծայում:

Եսի գիտակցութեան իրողութիւնը կազմում է երևոյթների մի նոր ներքին աշխարհ, որը դրսի աշխարհից անկախ, գոյութիւն ունի. թէև անկախ, բայց նրա երեսոյթների հետ զուզվնթացաբար, միաժամանակ: Պէտք է նկատել որ այդ երկու աշխարհները—ներքին և արտաքին—իրար վրայ փոխադարձ աղղեցութիւն են գործ գնում: Արտաքին աշխարհը ներգործում է մեզ վրայ, մեր ներքին աշխարհն էլ—մեր եսը—ներգործում է արտաքին աշխարհի վրայ: Մենք թէև աշխարհի մի մասն ենք կազմում, բայց և այնպէս կանգնած ենք նրանից բարձր, նրա դէմը և նրա ամբողջութեան մէջ՝ իրեք նրանից խիստ բաժան ու ոռոշ, միաժամանակ մենք ինքներս էլ իրար մէջ խիստարբերուելով:

Ասում են, որ ես-ը չի կարող ճանաչողութեան-
ըմբռնողութեան առարկայ դաւանալ, որովհետեւ երբ նա
ինքն իրեն է զննում, միաժամանակ և զննող է և
զննուող, թէ սուբյեկտ և թէ օբյեկտ. այս հարցը ճիշտ
այն չափով իրաւացի է, որքան որ գիտակցու-
թիւնն ինքն իրեն գիտուելու մէջ իրը թէ որոշ չա-
փով անկարող է: Բանն այն է, որ գիտակցութիւնը
մեզ անմիջաբար արուած է, և զիտել ու զննել կա-
րելի է միայն այդ գիտակցութեան բովանդակութիւնը—
առարկան: Մեր նկրքինի ըննութիւն—ուսումնասի-
լութիւնը շատ աւելի դժուար է, քան թէ արտաքին
աշխարհի քննութիւնը: Եթէ մենք զիտում ենք ածու-
խի այլուելը, գիտում ենք այդ իրողութիւնը բոլորո-

վին սառն և անտարբեր ուշադրութեամբ, իրբ մի առարկայական երեսոյթ. իսկ եթէ մենք մեր ներքին աշխարհի երեսոյթներն ենք դիտում, այն ժամանակ մեր դիտութեան ճշտութիւնը հետևեալ փաստից տուժում է—որ մենք չենք կարող այդ երեսոյթները մեզնից այնպէս անջատել, որպէսզի մեր սեփական եսի հանդէպ այնպէս սառն մնանք, ինչպէս այրուող ածուխի հանդէպ:

**

Այնուամենայնիւ այդ դժուարութեան գիտակից լինելով՝ մեր միջի եսում հաստատութիւնը չի կարող խախտուել, հակառակ դէպօւմ ինչպէս պիտի կարելի լինէր այն դժուարութիւնները—գիտակցութեան բովանդակութիւնը և այլն ապացուցանել, և միաժամանակ մեր գիտակից լինելը հարցական դարձնել: Անխախտ է մնում նաև այն գիտակցութիւնը, թէ հոգեկան կեանքի օրէնքները ոչ բնագէտների չափով ու կշռով, ոչ էլ աստղաբաշխորէն կամ մաթեմատիկորէն ըմբռնելի չեն:

Որովհետև և թէ ես-ը թուաբանօրէն որոշել կարելի լինէր, ինչպէս աստղերի շարժումները օրինակ, այն ժամանակ ճշմարտի և սուտի մէջը արժէքի ոչ մի տարբերութիւն չէր մնայ, որովհետև թուաբանական մեծութիւնն ըստ էութեան նոյնութիւն է ներկայացնում. այն ժամանակ արժէքի գնահատութեան գաղափարը, որը մենք մի անգամ ընդմիշտ մեզանում կրում ենք, չպէտք է գոյութիւն ունենար: Եթէ մեր հոգեկան կեանքը մեքենայօրէն բացատրել կարելի լինէր, այն ժամանակ, օրինակ ճշմարիտը և սուտը, իրա-

տունքն ու անիրաւութիւնը կլինէին իրար հակառակ բաներ միայն, ինչպէս սև և սպիտակ, լոյս ու խաւար, և ոչ թէ հակասական բաներ, ինչպէս այս և ոչ, առաջին դէպօւմ բարոյական արժէքի տեսակէտով իրար հակառակ գաղափարները հաւասար արժէք են ներկայացնում, մինչդեռ երկրորդ դէպօւմ բարոյական արժէքի տարբերութիւն կայ:

Մենք ունենք մի անգամ ճշմարտի և սուտի այս գիտակցութիւնը, մենք կարող ենք հաստատ որոշել, որ իրեն առհասարակ առանձնայատուկ արժէքներ ունեն, այս իրողութիւնով, որն այնպէս հաստատ է, ինչպէս լուսնի երկրի շուրջ պտտելը, մեզ պարզ յայտնի է դառնում, թէ մեր մտաւոր—հոգեկան կեանքը բնական-մարմնական կեանքից բոլորովին անկախ և նրանից տարբեր մի բան է: Սրանով մենք մեզ զըտնում ենք մի աշխարհում, որը բնական օրէնքների սահմանից դուրս է և երբէք նրանցով բացատրել չի կարելի. այդ ներքին աշխարհի վրայ նիւթի և ոյժի պահպանման օրէնքները ոչ մի գործածութիւն չեն գտնում և նշանակութիւն ունենալ չեն կարող:

Այստեղ ահա պէտք է որոնել մեքենայական և նիւթապահտական աշխարհայեացքների դէմ հղած կոռու ծանրակէտն ու ելակէտը: Այս աշխարհայեացքները ձգտում են հոգեկան-մտաւոր կեանքը նիւթի և ոյժի ազգեցութեան սահմաններում ներփակել և նրանցով բացատրել: Մենք պէտք է վճռապէս շեշտենք, որ ներքին աշխարհի գնահատութեան գիտակցութիւնը ոչ պակաս հաստատ հիմնաւորուած է, բան արտաքին աշխարհի մասին եղած գիտակցութիւնը, որի գոյութիւնը միայն մեր ներքին աշխարհի զգայութեան մի-

ջոցով ենք ըմբռնում: Ներքին աշխարհն իր կարևորութեան տեսակէտով բռնում է առաջին տեղը, արտաքին աշխարհը երկորպ, որովհետև մենք առաջինով է որ երկորպը ըմբռնել կարող ենք:

Ճիշտ է, այստեղ էլ առաջ են գալիս բազմաթիւ դժուարութիւններ. ինքնագիտակցութիւնը զարգանում է մեր մէջ կամաց-կամաց, օրօրոցում անզիտակից պառկած երախայից՝ առաջիմող փորձառութեան շնորհիւ հետզհետէ զարգանում է հանճարը, որի հոգին բովանդակ աշխարհն իր մէջ է պարփակում: Բայց և այս հանճարն էլ դասնում է ուղեղի կրացման զոհ. — հանճարեղ միտքը, դժբախտաբար, դատարկում և ցամաքում. է: Դաշնակահարի լարած գործիքն էլ նոյնպէս է հնանում խարխլում, և դրանով գրկում է վարպետ դաշնակահարն իր հանճարեղ մտքի արդինքը շրջապատին հաղորդելու կարողութիւնից. թւում է թէ նա ինքն էլ առանց այդ գործիքի ոչնչանում է, իր գոյութիւնը կորցնում. այս նմանութիւնը կարծես թէ հոգու և մարմի յարաբերութեան մէջ էլ կարելի է տեսնել: Ճիշտ այդպէս է և երգհնոն նուազողի հետ. եթէ օդասու փուրքսերն իրենց գերը չկատարեն, նա գրանով ոչ միայն անզօր է, այլ և մեզ համար կարծես չքանում է, եթէ նա օրինակի համար վարագոյրի ետևում է գտնում և մենք նըան չենք տեսնում: Այսպէս էլ միտքը (հոգին) ուղեղի վիճակից կտիւում ունի, որովհետև սա է նրա արտայայտութեան միջոցը: Սակայն սխալ կինքը այդ պատճառով այն երկուսը—միտքն ու ուղեղը—նոյնացնել, ինչպէս որ նոյն չափով սխալ է նուազողն ու նուազարանը նոյնացնել:

Մինչև այսօր բոլոր այս դժուարութիւնները վերացնելու և այդ երկուսի յարաբերութիւնը որոշելու համար զոհացուցիչ բացատրութիւն զանելու բոլոր փորձերն անհետեանք են անցել: Բայց այս դժուարութիւնները մեզ համար այնքան աւելի մեծ չեն, որքան բնագէտների այն դժուարութիւնները, որոնց նա «ոյժ» և «նիւթ» զաղափարների անըմբանելիութեան պատճառով իր բացատրութիւնների մէջ վերջի վերջոյ հանդիպում է:

Մեր նպատակը, մեզ հետաքրքրողն այստեղ մեր գոյութիւնն է, մեր գոյութեան գիտակցութիւնից առաջնորդուելով՝ ձեռք ենք բերում մեզ համար մեր հոգեկան կեանքի սահմանը— ասպարէզը, որը մեզ համար մի բոլորովին անկախ, բարձր կեանք է:

Եթէ մենք ճշմարիտ և սխալ, բարի և չար գաղափարներն ըստ իրենց էութեան, իրենց ներքին արժէքի տարբերում ենք իրարից, այս գէպքում վարում ենք ճիշտ այնպէս—այսինքն ճիշտ նոյնչափ հաստատ հողի վրայ, երբ մենք մի կտոր ածուխի միջոցով տաք և սառն, պայծառ և խաւար զաղափարներն իրարից զանազանել ուզենք:

2. Ներքին, հոգեկան-մտասոր աշխարհը:

Այն իրողութիւնը, թէ ներքին-հոգեկան կեանքը անկախ է, մեզ աւելի է առաջ տանում. նոյն իրաւունքով ու հաստատութեամբ, որով մենք արտաքին իրեն ենք գիտում, անում ենք և ներքին դիտողութիւններ. թէն այս գէպքում հաստատ լինելը մի քիչ այլ կերպ է, բայց վատահութեան տեսակէտից զա մեզ համար երբէք պակասաւոր չէ:

Եթէ մեր ներքին աշխարհում զգում ենք, թէ այս

համաշխարհային պատմութիւնը դէպի մի որոշ նպատակներ է ձգտում, թէ այն ամենը, ինչ որ տեղի է ունենում, պէտք է որ մի նպատակայարմար վախճանի ժառայի, այն ժամանակ այս համոզումը մեր անմիջական և վարկենական զգայութեան համար, մեր հոգեկան կեանքի սահմանում ճիշտ այնպէս ձեռքբերած իմացութիւն է՝ ինչպէս բնութեան մէջ ձգողութեան երկոյթի իմացութիւնն է: Զենք կարող այստեղ մաթեմատիկական ապացոյցներ բերել, որովհետեւ հարցը մի այնպիսի զգայական—փորձառական սահմանի է պատկանում, ուր մաթեմատիկական օրէնքը գործածութիւն գտնել չի կարող: Ամեն մի գիտութիւն ունի իր սեփական մեթոդը, և եթէ մենք մէկի մեթոդը միւսի վերաբերմամբ գործածել չենք կարող, այդ արդէն նշան է, թէ նրանք իրարից բոլորովին տարբեր գիտութիւններ են, և դրանից չի հետեւմ, թէ ուրբեմն այս կամ այն գիտութիւնը սխալ է:

Հոգեկան կեանքում մենք պարզ տարբերութիւն ենք դնում երկու տարբեր իրողութիւնների մէջ, 1) հասկացողութիւն, որը գիտակցութեան բովանդակութիւնն իրական է զարձնում, տրամաբանական օրէնքների համաձայն կարգաւորում նրան և այսպիսով արտաքին աշխարհը մաթեմատիկօ-բնագիտօրէն ձևակերպում. 2) զգացմունք և նրա հետ շատ սերտ կապուած կամք, որոնք գիտակցութեան բովանդակութիւնն ըստ իրենց ներքին արժէքի դասաւորում:

Կրօնական զգայութիւնը չի պատկանում հասկանալու սահմանին, այլ զգացմունքի: Մեր յարաբերութիւնը դէպի մեր ծնողները, դէպի մեր ընտանիքը, դէպի մեր ազգը, մի սառն դատողութեան—հաշուե-

տուութեան յարաբերութիւն չէ, այլ մի մտերժական և անձնուիրական, զոհաբերութեան ընդունակ սիրոյ յարաբերութիւն—այս բոլոր զգայութիւններ են, որոնք միայն զգացմունքի սահմանին են պատկանում: Այս զգացմունքը տածում ենք մենք դէպի տիեզերքի և նոյն այդ զգացմունքի մէջ իշխող ողին, որին մենք սովորաբար «Աստուած» անունն ենք տալիս: Մենք պէտք է ֆառաւտի հետ կրկնենք—«խօսքը մի լոկ հնչիւն է, ծուխ է. իսկ զգացմունքը ամեն ինչ է»:

Մենք գիտակցում ենք անշուշտ, որ այստեղ զգացողութիւնների մասին միայն նմանաբանելով ենք խօսում, ինչպէս որ այդ միւսոյնը արտաքին աշխարհի իրերի հանդէպ գործ հնում: Կրօնական զգացմունքի ամենայարմար անունն է «երկիրզածութիւն» խորին մեծարանք» խօսքը, որը մարդիկ զգում են դէպի մեծութիւնները—լինի դա լնութեան մի հսկայական ոյժ, թէ մարդկային մի հանճար, և կամ թէ մեր ամենի հայր—տիեզերական ողին. այդ խորին մեծարանքի մէջ զգում ենք կրօնական զգացմունքի գոյութիւնը:

Այս ինդրում չենք կարող իրար համոզել, ոչ մի մարդ չի կարող այս երկոյթը փաստերով ապացուցանել: Ընդունել տալ և համոզել կարելի է հասկացողութեան սահմանում, իսկ զգացմունքը պէտք է վերապրել, հոգու խորցում զգալ: Ֆառաւտի իր օգնականին ասած խօսքը—«մինչեւ որ դուք այս բանը չզգաք, չէք ընկնի նրա հաւեկից» ամենից աւելի կրօնական զգացմունքին է յարմար:

Զգացմունքները սակայն միշտ նոյն թափով չեն
4

կըևան են գալիս. այս բանում մենք կախում ունինք մեր վերապրումներից, մեզ հանդիպած պատահմունքներից. սրանք՝ զգացմունքները տարսութերում են այս ու այն կողմը, «ալիքների նման երբեմն ուռչում, բարձրանում են, երբեմն մահու շափ թափծում»։ Այսպէս էլ կրօնական—հոգեկան կեանքն է։

Այս գէպըում է որ կամքը պիտի երկան գայ և գժուարութիւններին յաղթեռով առաջ անցնի։

Եթէ մենք մեր կեանքում զգացել ենք երբեկ, որ աշխարհն անմիտ ըստ չէ, և գուցէ այս բանը զգացել ենք հէնց այն ժամանակ, երբ ամեն ինչ մեզ անմիտ է թուացել ու այդ բոպէում մի բարձր նպատակ, մի խորը միտք ենք գտել, հէնց այդտեղ պէտք է ուժգին կամքով բոլոր անյուսութիւնների միջով առաջ անցնել և կեանքի նպատակից պինդ բռնկլ։ Դէպի արդարութիւն ու ճշմարտութիւն, գէպի սէր ու հաւատարմութիւն եղած հաւատը պէտք ամեն օր կրուով ձեռք բերել, հակառակ գէպքում դա հաւատալ չի լինի, այլ իմանալ—գիտնալ (Wissen)։ Մեր զգացմունքները շարունակ փորձի ենթարկող կեանքի առաջ բերած բազմազանութեան մէջ անհրաժեշտ է միշտ էլ կրուելով առաջ գնալ և սկզբնական ստուգութեանը հասնել. և այս ճանապարհի վրայ ձեռք բերած ամեն մի յաղթութիւն զօրեղացնում է մեր հաւատը և ամրացնում։

Հաւատն ամենից աւելի հակառակորդ ոյժերի դէմ մղած կրուի մէջ իր բարոյական ոյժ լինեն է ապացուցանում։ Այն անհատը, որը հաստատ հաւատում է ճշմարտութեան և արդարութեան վերջնական յաղթանակին, նա կեանքի մէջ եղած թշնամի աւարերին

գէմազրելու աւելի մեծ ոյժ ունի և կարող է այդ հաւատի շնորհիւ աւելի մեծ գործ կատարել, քան նա, որը չունի ներքին հոգեկան կեանքի այս ամենաթանկ կողմը—հաստատ հաւատալ մի բանի և ըստ այնմ էլ գործել, —ում հաւատալն անծանօթ է գեռ ևս։

Այս ճանապարհով միանում են զգացմունքն ու կամքը յոյսի հետ։ Անհրաժեշտ չէ այսաեղ մեր առաջապահ նպատակի ձևակերպման մասին մանրամասն և որոշ պատկեր տալ բաւական է հաստատ համոզուել, որ գաղափարը վերջի վերջոյ յաղթանակելու է, մինչեւ անդամ մահն էլ չի կարողանալու այս յոյսը մեզնից խել, որովհետեւ այդ յոյսն երբէք չէ կապուած մեղ՝ անհատներիս, մարդկանց ու կեանքի պահանջներին։ Ով սովորել է իրեն մի կենդանին Ամբողջութեան անդամը համարել, նա, եթէ մինչև իսկ ինքը նպատակին համնելու էլ չլինի, այնուամենայնիւ յոյսի շնորհիւ վեր կրաքճրանայ անհատական կեանքի և գոյութեան մանրութիւններից։

ԻՄԱՆԱԼՈՒ ԵՒ ՀԱԽԱՏԱԼՈՒ ԿԱՊԲ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Ամենից առաջ մեղ համար գոյութիւն ունի գեռ մի երկուութիւն՝ պատճառի և հետեանքի։ Մեքենայական ու նիւթական արտաքին աշխարհը կանգնած է զգացմունքի, կամքի և յոյսիներքին աշխարհի հանդէպ։ Կայ արդեօք մի կամուրջ այդ երկուուր մէջ։ Մենք չակտած է այդ կամուրջը այն ձևով որոնենք և ներքին աշխարհի զգացմունքներն այն կէտից համարել սկսենք, ուր արտաքին իմանալը կանգ է առնում։ հաւատը չպէտք է իմանալը լրացնող, նրան ծեփող կաւ

գառնայի, որովհետև իմանալու սահմանն անդադար ընդունակ է աղատ թողնել հակառակ դէպքում դա կլինէր հաւատին ստիպել՝ իր դրսի պահապան բուրգերից մէկը միւսի ետից ձեռք քաշել ու վերջի վերջոյ նրան իր ներքին ամրոցը պաշտպանելու քաջութիւնից զրկել; Մենք ձգտում ենք դէպի աշխարհայինացքների մի միութիւն, այս այն ճշշմարտութիւնն է, որը մօնխատական վարդապետութեան հիմքն է կազմում: Ընդունակութեան (Werden) կանոնաւոր և անհրաժեշտ յաշըրդականութիւնը, սակայն բնական գիտութիւնը կարող է մեզ միշտ էլ միայն պատճառները մատնացոյց անել, իսկ նպատակները՝ երբէք, նա կարող է մեզ միայն յնտ նայել սովորեցնել թէ այս ինչ երեսյթը ինչ մի անցեալ պատճառից է առաջացել, իսկ դէպի առաջ նայել երբէք:

Միայն վերջնական նպատակից է, որ առաստ լրյա է սփռւում ամբողջ լինելութեան պրօցէսի (Werdep-
rocers) վրայ. վերջնական նպատակն է, որ մեզ առաւմ
է, թէ այն բոլորը, ինչ որ կայ, պէտք է լինէր. և դրա-
նով նա մեզ մի աւելի խոր պատճառ է մատնացոյց
անում, քան թէ իրերի զարգացման լոկ ուսումնա-
սիրութիւնը մեզ ասել կարող էր:

Մեքենայական մտածելակերպն անընդունակ է մեզ աշխարհի այս հիմարանչ նպատակայարմարութիւնը բացատրելու Բնագիտական հետազոտութեան միանհրաժեշտ լրացուցիչ մասն է կազմում աշխարհն ըստ իր նպատակի և դիտաւորութեան գննել, նրա կարգաւորուած զանազանակերպութիւնը—գեղեցիկի ու տգեղի, ճշմարտի ու ստի, բարու և չարի տարրերու-

թիւնսկը ուսումնասիրել։ Արտաքին աշխարհն առաջին անգամ այն ժամանակ կարող ենք իրեւ մի ամբողջութիւն ըմբռնել երբ մենք նրան մեր ներքին աշխարհում կատարուած երկոյթների լոյսով լուսաւորենք։

Տիեզերքի ողին—Աստուած մի ժամագործի նմանչէ, որ ժամացոյցը շինէ, լարէ և թոյլ տայ, որ նա առանց իր մասնակցութեան բանի, բանի ու դպրաբի. Նա այն ոյժն է, որ ժամացոյց—աշխարհը իր ընթացքի մէջ է պահում, և այդ մի օրինակելի կանոնաւորութեամբ, որովհետեւ նա կանոնաւորութեան և օրինաւորութեան Աստուած է: Բնական օրէնքները մեղ ցոյց են տալիս աստուածային ներգործութեան միայն մի կողմը. և այն բնագէտը, որ պարձենում է, թէ երեւոյթների կարգը գտել է, գրանով նա Աստուծու էութիւնը, նրա իսկական գործելակերպն է հաստատում:

Աստուծու ամենակարողութիւնը չպէտք է կամայականութիւն համարել. ամեն մի էութիւն ունի իր առանձնայատուկ օրէնքը: Արտաքին երեսյների մէջ գտնում ենք այն օրէնքները, որոնց մէջ Աստուծու գոյութիւնն ինքնիրեն արտալաւում է:

h o u g h t s r u n

Մի քանի խօսք ասենք հրաշքի մասին: Զենք
խօսի այն հսկայ, համայնածաւալ հրաշքի մա-
սին, որ աշխարհն ինքն է, ոչ էլ այն հրաշքի մասին,
որ մենք ինքներս ենք մեր, գոյութեամբ: Մենք այս-
տեղ կխօսենք մասնակի հրաշքների, բնութեան օրէնք-
ներն երբեմ թէ խանգարող երևոյթների մասին:

Բնագէտը ժիտում է բոլոր հրաշքները. նա օրինակի համար, չի ընդունում աստուածաշնչի մէջ յիշած արևի կանգնելու հրաշքը, և նա իրաւունք էլ ունի. չի կարելի այդ հրաշքը տառացի ընդունել նա կապուած է շատ առասպելների և զրոյցների հետ, ինչպէս գիտնականները ցոյց են տալիս: Մովսէսի գաւազանով ժայռից ջուր հանելը, Սինայի վրայ ամպերի մէջ Աստուծու հետ տեսակցելը և այլն նման հրտշքաւանդութիւնները ժողովրդական մի պատմողի վառ երևակայութեան և բանաստեղծական ողու արդիւնք են միայն:

Բնագէտը այլ կերպ է վերաբերում Յիսուսի բժշկութիւններին և նման երևոյթներին, որոնք ժամանակից մարդկանց իբրև հրաշք են երևացել: Գիտութիւնն այժմ այնքան է առաջ գնացել, որ մենք կարող ենք որոշ նմանութիւններ գտնել Յիսուսի բժշկութիւնների և ներկայումս շատ առանց դեղի բժշկուող հիւանդութիւնների մէջ, օրինակ ներշնչումից մագնիսի և այլն միջոցներով: Մեր օրերում էլ մարդիկ են պատահում, որոնք իրենց մէջ կրում են այն ոյժը, և բժշկութիւններ են կատարում, ինչպէս Յիսուսն էր անում. այստեղ հակաբնական և հրաշքի նմանեցնելու բան չկայ երբէք: Այս երևոյթը մի անհասկանալի հրաշք, այսինքն բնութեան օրէնքները խանգարող մի երկոյթ չէ: Եթէ մեզ ամեն դէպքում չի աջողւում այս տեսակ ոյժերն ըմբռնել ու մեկնել գոնէ այսքանը դիտենք նրանց մասին, որ կարող ենք այդ երեսյթները բնութեան այս կամ այն օրէնքի տակ դասաւորել:

Այժմ դասնանք մեր օրերի հրաշքներին:
Արդէն շատերին յայտնի է Բիորնսոնի «Ուժից

վեր» դրամայի առաջին մասում եղած հրաշքը, երբ լեռը փուլ է գալիս, բայց ամենից վտանգաւոր տեղում կանգնած մատուռին և նրա մէջ աղօթող պաստօր Զանգին խնայում է—փլչող լերան բեկորները մատուռի մօտ կանգ են առնում կամ թէ ուղղութիւնը փոխում: Բնագիտական տեսակէտով սա մի հրաշք չէ. տարիներ շարունակ պատրաստուելիս է եղել այդ փլուզումը—սատնամանիքը, ջուրն և հրակէզ արել լերան մէջ ձեղքեր էին առաջ բերել, որոնք նրան փլչելու աստիճանին էին հասցրել, ու վաղուց ի վեր պարզ հաստատուած էր, որ լեռը կործանուելու է. հէնց տարիներ շարունակ էլ լերան ձեղքուածքների դիրքն այնպիսի ուղղութիւն և ձև էր ստանում, որ լերան այն փէշը, ուր մատուռն էր կանգնած, անվնաս է մնում և ժայռամասերը կործանման ուղղութիւնը փոխում են,— այնուամենայնիւ պատօր Զանգն իրաւոնը ունէր այդ երեսյթը հրաշքով բացատրելու. բայց ոչ նրա համար, որ նա իր աղօթքով իբր թէ որոշ ոյժեր է առաջ բերել, որոնք լերան բեկորների ձգողականութիւնը ոչնչացրին կամ նրան այլ ուղղութիւն տուին, որի պատճառով նրանք փոխանակ ուղղի գծով դէպի երկրի կեղրոնը ձգտելու, թեք գծով են ձգտել:

Նման հրաշքներ, գուցէ մի քիչ ուրիշ կերպ կարող են այսօր էլ շատերին պատահել. և նրանք այսօր էլ իրենց տպաւորութիւնը թողնում են, մեզ առանձնապէս պարզ և ուժեղ կերպով յիշենելով, թէ ինչքան մանը ու չնչին է մարդը՝ համեմտած տիեզերքի մեծութեան, նրա ամբողջութեան հետ: Այսպէս ազգում են նրանք և մեզ վրայ, մեր յարաբերութիւնը դէպի տիեզերական Ոգին—Աստուած աւելի ներքին ու մտեր-

մական ին դարձնում ու զգալ տալիս, թէ մենք միշտ նրանից կախում ունենք: Մի խօսքով այսօր այդպիսի հրաշըներն ամբազնդում են մեղանում հաւատը դէպի Աստուծու ներկայութիւնը և մեզ վրայ իրրե մի յայտնագործութիւն ազդում:

Կարող է պատահել, որ մեր այս պարզաբանութիւնները մի քանիսին համոզիչ չթուին. այդ կախուած է այս խնդրի առանձնայատուկ լինելուց, որովհետեւ եթէ մէկը հաւատի խնդրում մի ուրիշի ապացոյցների միջոցով համոզիլ կարողանար, այն ժամանակ այդ այլ ևս չէր լինի հաւատ. հաւատը կարիք չունի ապացոյցի: Սակայն մենք գոնէ այս մէկ բանում ենք համոզուած, թէ այն անհաւատին, ով ներքին աղնի մղումով մաքանում է մի աշխարհայեացք ձեռք բներելու, նրան մենք ցոյց տալ կարողացանք, որ մեր ժամանակի անհատն էլ՝ գիտութեան անհրաժեշտութիւնը չմերժելով հանդերձ՝ կարող է կրօնական զգացմունք ունենալ: Կրօն ասելով՝ չպէտք է այն հին սովորական դարձած իմաստով հասկանալ, ոչ էլ ներկայումս գոյութիւն ունեցող կրօններից մէկի հետ նոյնացնել, այլ այդ բոլոր տարբեր կրօնների մէջ խորը ներգործող և նրանց տարբերութիւնը հաւասարեցնող հաւատը պիտի հասկանալ:

Կրօնը ներքին ապրումների գործ է և ով որ կրօնական զգացմունք ունի, ով երկիւզածութեան ու խղճի զգացմունք է կրում իր կրծքում, նա պարտական է զրանց էլ հետեւ, և ոչ թէ զանազան արգելքների ու տպաւորութիւնների ենթարկուելով նրանց լոեցնել: Որովհետեւ գիտնականորէն մի բան իմանալը և կրօնական զգացմունքը չնորհիւ հաւասարալը մեր հոգեկան—մտաւոր կեանքի հաւասարաթէք և նմանաթէք արտադրայտութիւններն են. և միայն այդ երկուսը միացնեամ են մարդուս՝ մի լրիւ և ամբողջական:



7/11/1922

Ա. Ա. ԱՅԱՍՏԱԿԵԱՆԻ ԱՆԴԱՐ

Ա. Ա. ԱՅԱՍՏԱԿԵԱՆԻ ԱՆԴԱՐ

ԼՈՅԱ ՏԵՍԱՆ

- 1) Ի՞նչ է կրօնը և ի՞նչ է բարոյականութիւնը գ. 15 լ.
- 2) Սրբազն պատմութիւն կարայէլի . . . գ. 50 լ.
- 3) Ի՞նչ է Աստուածաշունչը գ. 20 լ.
- 4) Բնագիտական և Կրօնական աշխարհա-
յեացք գ. 20 լ.

Մամինի տակ է

Բարոյագիտութիւն

ԳՊ. Մ. ԽՈՍՔԿԵԱՆԻ

ԳԻՆՆ է 20 ԿՐՊԵԿ

741

0027241

738



